

ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅԱՆ ԿՈԹՈՂԸ

ՊԱՏԱՍԽԱՆ

«Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի երրորդ հատորի վերաբերյալ ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ-ի տնօրենի Ժ. պ. Հ. Դեմոյանի խմբագրությամբ շրջանառված «գրախոսությանը»

Վերջին օրերին հանրապետության ղեկավարությանը և գիտության ոլորտի պատասխանատուներին ուղղված մի նյութում, որ կրում է «Կոթողային խայտառակություն» արտասովոր վերնագիրը, Յեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հ. Դեմոյանը նույն հաստատության գիտական խորհրդի անունից, իբրև թե առաջնորդվելով *«մասնագիտական պարտքով, այլ ոչ թե անձնական նախասիրություններով կամ միտումներով»*¹, քննարկման առարկա է դարձրել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայոց պատմության» բազմահատորյակի երրորդ հատորի առաջին և երկրորդ գրքերի, իր կարծիքով՝ *«գիտականության և պրոֆեսիոնալ ցածր մակարդակով իրականացված լինելու»* հարցը: Խնդրի էությունը հասկանալու համար ստիպված ենք մինչ «գրախոսությանը» անդրադառնալը վեր հանել դրա ի հայտ գալու դրդապատճառները:

¹ Ինչպես սույն գրախոսության տեքստից, այնպես էլ Հ. Դեմոյանից մեջբերված բոլոր քաղվածքները տե՛ս շեղատառերով, իսկ բազմահատորյակից մեջբերված հատվածները՝ հոծ տառերով:

ա) Նախապատմություն:

Արձանագրենք, որ մեզ համար հիշյալ անձի կողմից այս քայլն անսպասելի ու զարմանալի չէր, քանի որ տարիներ շարունակ, ինչպես հայ պատմաբանները, այնպես էլ մեր ողջ հասարակությունը բազմիցս ականատես են եղել Հ. Դեմոյանի անհավասարակշիռ ու անպատասխանատու գործողություններին՝ դատական խնդիրներ իր իսկ ղեկավարած հաստատության աշխատակիցների և ՀՀ այլ քաղաքացիների հետ, ՀՅԹԻ-ի տնօրենին ոչ վայել սկանդալային հարցազրույցներ, տարբեր մտավորականների հասցեին զրպարտագրերի հրապարակում, մամուլի աշխատողների, պատմաբանների, անհատ-քաղաքացիների հետ համացանցային ու հեռուստատեսային ամոթալի «բանավեճեր», ՀՀ բարձրագույն դրակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) ու ՀՀ ԳԱԱ հասցեին հնչեցված անհիմն ու մտացածին մեղադրանքներ և այլն:

Բայց դրանց մեջ «գերզուլագործոցը», անկասկած, 2014 թ. դեկտեմբերի 25-ին տրված մամուլի ասուլիսն էր, որտեղ Դեմոյանը «բացահայտեց» թուրքական հատուկ ծառայությունների հետ ՀՀ քաղաքացիների համագործակցության «փաստը»: «Առավուտի» թղթակցի պնդմանը, որ *«Դուք հիմնա ստիպված եք սսել այդ պաշտոնյայի անունը, որը Թուրքիայի հատուկ ծառայությունների համար է աշխատում՝ Հայկ Դեմոյանը անուն տվեց. «Խոսքը Աշոտ Մելքոնյանի մասին է, որ փորձեց բոլոր ճիգերը գործադրել՝ տապալելու իմ ատենախոսությունը»* (տես «Առավուտ», 25 դեկտեմբերի, 2014 թ.): Ստացվեց, որ մեզանում թուրքական գործակալներ կան, որոնց միջոցով փորձ է արվել տապալել Դեմոյանի ատենախոսությունը: Բայց ոչ թուրքական գործակալները չեզոքացվեցին, ոչ էլ զրպարտության համար Դեմոյանը պատժվեց:

Մեր կողմից վերոհիշյալ «ասուլիսի» վկայակոչումը պատահական չէ: Այն նպատակ ունի սկզբից ևեթ հերքելու Դեմոյանի այն պնդումը, որ նրա սույն քայլը թելադրված է՝ Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո գիտաքաղաքական մեծ կարևորություն ունեցող այս հրատարակությունը կատարյալ տեսնելու մղումով: Իրականում խնդրի ակունքները 2012 թ. փետրվարի 28-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում նրա՝ խոցելի ռուսերենով գրված, քաղաքական առումով խիստ վտանգավոր թեզեր պարունակող դոկտորական ատենախոսության՝ «Ղարաբաղյան հիմնահարցը և Թուրքիան», աղմկահարույց «պաշտպանության» մեջ են: Մասնագիտական խորհուրդը պահանջում էր վերանայել հակահայկական վտանգավոր այն թեզը, որ արցախյան հիմնահարցում Թուրքիան կոնֆլիկտի կողմ է: Ընդ որում այդ թեզը համարվում էր աշխատության գլխավոր «նորոյթներից» մեկը: Ատենախոսության 357-րդ էջում հատուկ ընդգծված է. *«Учитывая роль Турции в зоне карабахского противостояния, следует констатировать, что, во-первых, Турция стояла у истоков возникновения Карабахской проблемы как таковой, во-вторых, Турция сама является стороной конфликта в силу своей непосредственной и косвенной вовлеченности в динамику конфликта»* (ընդգծումը հեղինակինն է):

Ինչպես այս, այնպես էլ սկզբունքային մի շարք այլ հարցերում, իր սխալ մոտեցումները փոխելու, ատենախոսության լեզուն հայերեն դարձնելու վերաբերյալ Ա. Մելքոնյանի և խորհրդի այլ անդամների բոլոր փորձերին անսխալականության բարդությամբ տառապող ատենախոսը պատասխանեց, որ որպես գիտնական իրավունք ունի պաշտպանելու իր տեսակետը՝ անկախ այն հանգամանքից՝ ճիշտ է, թե սխալ, անգամ եթե այդ մոտեցումը քաղաքականապես վտանգավոր է:

Առանց Ա. Մելքոնյանի կայացած պաշտպանության արդյունքում ճայների մեծամասնությամբ որոշում ընդունվեց Դեմոյանին շնորհել իր հայցած գիտական աստիճանը: Սակայն շուտով ՀՀ ԲՈՀ-ը մերժեց Հ. Դեմոյանին շնորհել դոկտորի գիտական աստիճան՝ պահանջելով ատենախոսությունում առկա բազմաթիվ սխալների ուղղում և աշխատանքի վերամշակում (ԲՈՀ-ի դիտողությունները, որոնց մեջ մատնացույց էին արվում նաև գրագողության դեպքեր, կցվում են): Հ. Դեմոյանը հարկադրված եղավ վերամշակել իր ատենախոսությունը, վերանայել մի շարք մոտեցումներ և հրաժարվել նաև՝ *«Թուրքիան ղարաբաղյան կոնֆլիկտի կողմ երկիր է»* անհիմն թեզից, որն ամբողջապես հակադիր է Արցախի հարցում մեր երկրի արտաքին քաղաքական ուղեգծին:

ԲՈՀ ներկայացված նոր տարբերակում վերոնշյալ նախադասությունն արդեն ստացել էր հետևյալ տեսքը. *«Учитывая роль Турции в зоне карабахского противостояния, следует констатировать, что, во-первых, Турция стояла у истоков возникновения Карабахской проблемы как таковой, во-вторых, Турция в одностороннем порядке вмешалась в Карабахский конфликт, примкнув к Азербайджану, путем непосредственного и косвенного участия в динамике эскалации конфликта»* (տե՛ս ատենախոսության վերամշակված տարբերակը, էջ 366):

Սկզբունքային հարցերում զիջման գնալը Դեմոյանին չփրկեց: Մամուլում բարձրացավ նոր աղմուկ, տպագրվեցին բացասական գրախոսություններ, ԲՈՀ-ը կրկին մերժեց աշխատանքը: Բայց, ԲՈՀ-ի՝ սխալների մնացած մասը ևս վերացնելու նոր պահանջը չկատարած Դեմոյանին շնորհվեց դոկտորի աստիճան, այսինքն՝ կանոնակարգային խախտումով նա դարձավ (իրականում՝ օծվեց) գիտության դոկտոր:

2013 թ. նորաթուխ դոկտորը գրքի տեսքով, վերնագրին արդեն արևելագիտական տեսք տված (Гайк Демоян, Внешняя политика Турции и карабахский конфликт), լույս ընծայեց ատենախոսությունը, որում ևս հրաժարվեց նախնական սխալ դրույթներից, այսինքն՝ «սիրահոժար» եկավ այն նույն համոզման, ինչի մասին ժամանակին իրավացիորեն պնդում էին մասնագիտական խորհրդի անդամները և պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ., արտգործնախարարության աշխատակից Արսեն Ավագյանը: Հարց է ծագում, արժե՞ր այդպես համատել, երբ կարելի էր ատենախոսություն գրել մայրենիով, ականջալուր լինել գիտնականների խորհուրդներին և սրբագրել սխալները:

Ինչևէ, դոկտոր Դեմոյանը շուտով գործի անցավ և որպես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների հանձնաժողովի քարտուղար՝ իր հույժ կարևոր պարտականությունները մոռացած, պատեհ-անպատեհ սկսեց պատմության ինստիտուտին ու նրա տնօրենին, իր խոսքով՝ «վրաերթի ենթարկելու» գործընթացը:

Դրանցից մեկը 2013 թ. հոկտեմբերի 10-ին «Իրազեկ» կեղծանունով նրա հրապարակած «մատերիալն» էր, որում հեղինակը «խոտանել էր» դեռ 2002 թ. Ա. Մելքոնյանի պաշտպանած «Զավախքը XIX դ. և XX դ. առաջին քառորդին» դոկտորական ատենախոսությունը (հավանաբար 11 տարի այդ ատենախոսությունը մոռնով փնտրելուց հետո, միայն նոր էր գտել): Բայց ցավոք, երթևեկության կանոններին վատատեղյակ Դեմոյանն ինքը վթարի ենթարկվեց. նույն «Հրապարակ» թերթի 2013 թ. նոյեմբերի 6-ի համարում Ա. Մելքոնյանի լույս ընծայած ընդարձակ պատասխան-ֆելիետոնից («Իրազեկն անիրազեկ է») ակնհայտ դարձավ, որ 1937 թ. ոգով ստեղծված անանուն զրպարտագիրը՝ անոնիմ-

կան՝ գրված կեղծիքի, շինծու պնդումների ու անպարկեշտության դիրքերից, գիտության հետ որևէ կապ չունի:

Ի դեպ, ՀՅԹԻ տնօրենը՝ այդ նույն զրպարտագրի՝ Մելքոնյանին աշխատանքից ազատելու պահանջ-դիմումների տակ չստորագրելու համար թանգարանի մի քանի ունակ գիտաշխատողների կամ աշխատանքից ազատեց, կամ՝ «սեփական դիմումի» համաձայն, ստիպեց հեռանալ: Հաստատության գիտական խորհրդի կազմից դուրս եկան հանրապետության ճանաչված մի շարք հայտնի մասնագետ-պատմաբաններ (անհրաժեշտության դեպքում բոլորի ազգանունները կհրապարակվեն):

Դեմոյանական «հաղթարշավը» շարունակվեց. ՀՀ ԳԱԱ նախագահությունում ստացվեց Դեմոյանի ձեռքով գրված, ոչ ավել, ոչ պակաս՝ ՀՀ ԳԱԱ նախագահի հրամանի նախագիծը՝ Մելքոնյանին աշխատանքից ազատելու մասին: Բայց քանի որ այդ ազատումը տեղի չունեցավ, Դեմոյանը 2013-2014 թթ. ընթացքում մամուլի ասուլիսներում ցեղասպանության խնդիրներին անդրադառնալիս հանրությանը մի քանի անգամ հիշեցրեց Մելքոնյանի «մեղքերը»: Հնչեց նաև «սպառնալիք» ՀՀ ԳԱԱ նախագահության հասցեին՝ ՀՀ ԳԱԱ կազմից Դեմոյանի դուրս գալու մասին: Այդ օրվանից, բացառությամբ մի երկու դեպքերի (ընդհանուր ժողովներ՝ ՀՀ վարչապետի մասնակցությամբ) Դեմոյանը, իր «սկզբունքայնությանը» հավատարիմ, վերադաս կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ նախագահություն, մուտք չգործեց և «մնաց» ակադեմիայից դուրս: Անկեղծ ասած, այդպես էլ ակադեմիայի աշխատակիցներին պարզ չդարձավ, թե Դեմոյանը որպես անձ էր դուրս եկել ակադեմիայից, որի անդամը ինքը չէ, թե իր գլխավորած հաստատությունն էր հանել ակադեմիայի կազմից: Բայց մի բան պարզ էր՝ նրան տրված առանձնաշնորհները թույլ տվեցին անպատիժ շարունակել իր երթը, ոտնահարել աշխատանքային կարգուկա-

նորը, չենթարկվել վերադասին ու շարունակել «սկզբունքային պայքարը»:

Դեմոյանի ճանապարհը Մելքոնյանի հետ կրկին հատվեց 2016 թ., երբ նա որոշեց արժանանալ ՀՀ նախագահի մրցանակին՝ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում ունեցած նշանակալի ավանդի համար: Նա հանձնաժողովի (անդամներ՝ Հ. Գևորգյան, Ռ. Սաֆրաստյան, Ա. Վիրաբյան, Ա. Մելքոնյան, Ս. Աստուրյան, Վ. Գրիգորյան, Պ. Քյուչուկյան) դատին ներկայացրեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նոր ցուցադրությունը և միաժամանակ հիշեցրեց, որ իբրև այլընտրանքային տարբերակ մրցանակի համար կարող է առաջարկել նաև տարբեր պարբերականներից վերցված՝ իր կազմած նկարների ալբոմը, որոնցում պատկերված են ինչպես հայերի, այնպես էլ բալկանյան ժողովուրդների կոտորածները: Հանձնաժողովը ֆրանսահայ հայտնի ցեղասպանագետ Ռայմոն (Հարություն) Գևորգյանի գլխավորությամբ, Դեմոյանին մրցանակ չձևարեց:

Այսպես Ա. Մելքոնյանի դեմ պայքարը շարունակելու նոր առիթ ներկայացավ: Այս անգամ Դեմոյանը որոշեց ավելի հուժկու և լայն ճակատով հարվածել՝ «խոտանելով» հետխորհրդային ժամանակաշրջանում հայագիտության բնագավառում ունեցած ամենամեծ ձեռքբերումներից մեկը՝ պետական պատվերով իրականացվող «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակը, որի աշխատանքներին մասնակցել էին նաև Դեմոյանին «մրցանակ չձևարեց» վերոհիշյալ հանձնաժողովի անդամներ Հ. Գևորգյանը, Ա. Մելքոնյանը, Ռ. Սաֆրաստյանը և Ա. Վիրաբյանը: Որոշվեց «չխնայել» նաև բոլոր այն հեղինակ-հայագետներին, որոնց շնորհակալ աշխատանքի շնորհիվ ստեղծվել էր բազմահատորյակը: Բայց լույս տեսած գրքերից թիրախավորվեցին միայն երրորդ հատորի երկու գրքերը, քանի որ դրանց պա-

տասխանատու խմբագիրը Ա. Մելքոնյանն էր: Հ. Դեմոյանի «կոթողային խայտառակությունների» շարքում այդպես ծնվեց նաև այս պատկերը:

Այժմ անդրադառնանք ներկայացված դիտողություններին մաս առ մաս՝ հաշվի առնելով դրանց բովանդակային կողմը.

բ) ՀՅԹԻ-ի ներկայացրած «գրախոսության» բնույթը:

Ծանոթանալով 48 էջանոց «գրախոսություն» կոչված նյութին, շատ արագ հասկանում ես, որ գործ ունես, խորհրդային ժամանակների եզրաբանությամբ՝ «մատերիալի» հետ, որը լիովին բավարար էր անմեղ մարդկանց ամեն տեսակ մեղքերի մեջ մեղադրելու համար: Միաժամանակ, գնահատելով կատարված «տիտանական» աշխատանքը, չես կարող զարմանք չապրել այն ահռելի ջանքերի համար, որ «գրախոսները» գործադրել են մութ սենյակում չեղած կատվին բռնելու համար: Հարց է առաջանում՝ մի՞թե այդքան պարասպ ու այդաստիճան եսակենտրոն է Հ. Դեմոյանը, որ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենի այնքան կարևոր ու պատասխանատու պաշտոնն ի շահ մեր ժողովրդի ու պետության գործադրելու փոխարեն իր հետ սիզիֆյան աշխատանքի է դրդել նաև իր ղեկավարության տակ տառապող աշխատակիցներին՝ այս շինծու նյութը ստեղծելու համար:

Պարզորոշ երևում է, որ հրատարակչական վատ սրբագրի աշխատանք հիշեցնող «գրախոսությունը» սարքվել է երկար ամիսների ընթացքում, երբ պարզ է դարձել, որ Դեմոյանը չի արժանացել ՀՀ նախագահի մրցանակին: Պարկեշտ ու պատասխանատու, իրական ակադեմիզմը հարգող ու գնահատող գիտնականն այս ամենի փոխարեն իր տասնամյա տնօրինության շրջանում (2006-2016 թթ.) ձեռնամուխ կլիներ վաղուց պահանջված

Հայոց ցեղասպանության բազմահատորյակ ստեղծելու գործին, առավել ևս, որ այդ ընթացքում լրանալու էր Մեծ եղեռնի 100-րդ տարելիցը: Բայց թանգարանն այդպես էլ որևէ լուրջ, ակադեմիական հրատարակություն չստեղծեց:

Դեմոյանի խմբագրությամբ ներկայացված «գրախոսությունը» թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ չի համապատասխանում գիտական աշխարհում ընդունված գրախոսությունների տարրական պահանջներին: Այն իրականում «Հայոց պատմություն» բազմահատորյակի երրորդ հատորի բովանդակությունից տարանջատված քաղվածքների ժողովածու է, որի գեղակչիո մասը վերաբերում է Հայոց ցեղասպանության խնդրին ու պատմագիտական առանձին հասկացությունների ու տերմինների «*ոչ ճիշտ օգտագործմանը*»: Դիտողությունների ահռելի մասն էլ սրբագրական բնույթի են, զգալի մասով՝ դարձյալ կամայական մեկնաբանության ու չիմացության արդյունք:

Ընդհանրապես, որևէ գիտական աշխատության վերաբերյալ գրախոսությունը լինում է կոնկրետ մասնագետ(ներ)ի կողմից ստորագրված, որում նախ՝ արժևորում է աշխատանքը, նշվում դրական կողմերը, և նոր միայն անդրադարձ է կատարվում դրա թերություններին ու բացթողումներին: Գրախոսություն կոչվածի անսնուն հեղինակները՝ ի կատարումն Դեմոյանի ցուցումի, չեն բարեհաճել նշել բազմահատորյակի երրորդ հատորի հեղինակների կողմից արված կապիտալ աշխատանքի (ամբողջությամբ՝ շուրջ 1450 էջ) որևէ արժանիք կամ դրական կողմ, մինչդեռ դրանք խորհրդային տարիներին հրատարակված բազմահատորյակի համեմատ ակնառու են:

Հայտնի չէ, թե ով, կամ ավելի ստույգ՝ ովքեր են գրախոսություն կոչվածի հեղինակները: Այն փաստորեն անստորագիր է: Նյութի չտրամաբանված կառուցվածքից երևում է, որ այն ոչ թե

մեկ, այլ մի խումբ անձանց կողմից կազմված նյութերի հավաքածու է, ընդ որում՝ դրա կազմողները աշխատել են իրարից անկախ՝ մեկը մյուսի գրածից անստեղյակ: Դա պարզորոշ երևում է «գրախոսության» տարբեր էջերում հաճախ կրկնվող մտքերից ու մեղադրանքներից: Այսպես, հին ու նոր տոմարներին վերաբերող հարցադրումները կրկնվում են էջ 6-ում և 11-ում, հայ մտավորականության ձերբակալման ամսաթվերի հետ կապված մտքերը՝ էջ 13-ում և 33-ում, «Հայերի կոտորածները 1916 թ.» ենթավերնագրի վերաբերյալ դիտարկումները՝ էջ 8-9-ում և 33-34-ում, հայերի, ասորիների և հոյների նկատմամբ իրագործված ցեղասպանությունների վերաբերյալ դատողությունները՝ էջ 10-ում և 34-ում և այդպես շարունակ:

Մեկ խոսվում է երրորդ հատորի երկրորդ գրքի բաժինների մասին, ապա թռիչք կատարվում առաջին գրքի հատվածներին և հետո նորից քննարկվում են երկրորդ գրքի նյութերը: Պարզ է, որ Դեմոյան-խմբագրին այդպես էլ չի հաջողվել ի մի բերել իրեն հանձնված նյութերը, համադրման միջոցով կրկնությունները վերացնել և հաղթահարել դրանց խմբագրման դժվարությունները: Թեև չի բացատրվում, որ կրկնությունները թողնելու միջոցով նպատակ է հետապնդվել արհեստականորեն ավելացնել մատերիալի ծավալը՝ այն ավելի տպավորիչ դարձնելու համար: Բայց մի բան հստակ է, որ Դեմոյանը բազմահատորյակի խմբագրակազմին և հեղինակներին վարկաբեկելու «սև աշխատանքը» վստահել է անհայտ անձանց, իրեն վերապահել խմբագրի «պատվավոր» դերը, իսկ դրա պատասխանատվությունը դրել թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի վրա, որն իբրև այդ նյութը երաշխավորել է հրատարակության:

Ի դեպ, որքան էլ իրենց կազմած նյութը Դեմոյանը փորձել է ներկայացնել որպես ինստիտուտային կոլեկտիվ աշխատանքի

արդյունք, գիտական խորհրդով երաշխավորված ու ազնիվ մղումներով գրված գործ, այնուամենայնիվ, մի անգամ և՛ իրեն է բացահայտել և՛ իր նպատակները. 47-րդ էջում կարդում ենք. «... *առաջարկում եմ առաջին իսկ հնարավորության դեպքում հանձնարարականներ տալ այս հատորի շուրջ անաչառ ու չեզոք ակադեմիական քննարկումներ անցկացնելու և փորձագիտական եզրակացություններ ներկայացնելու համար*»: Նախ՝ հետաքրքիր է, թե ինչու այս մի նախադասությունը ձևակերպված է եզակի առաջին դեմքով («*առաջարկում եմ*»), մինչդեռ մնացած ամբողջ շարադրանքը հոգնակի առաջին դեմքով է: Մնում է ենթադրել, որ «գրախոսությունը» կամ գոնե դրա «*Անփոփիչ եզրահանգումները*» իրականում գրել է մի հոգի, ով հիշյալ տողերում ակամա մատնել է իրեն:

Երկրորդ՝ պարզ չէ, թե ով է այս հռետորական դիմումի հասցեատերը, քանի որ «գրախոսության» ամեն մի ընթերցող, բնականաբար, նման հանձնարարականներ տալու լիազորություններ չունի: Երրորդ՝ «գրախոսության» հեղինակները, ինչ-որ ատյաններից ակնկալելով «*անաչառ ու չեզոք ակադեմիական քննարկումներ ու փորձագիտական եզրակացություններ*», փաստորեն ակամա խոստովանել են, որ իրենց «**գրախոսությունը՝ ո՛չ անաչառ ու չեզոք է, ո՛չ ակադեմիական է, ո՛չ էլ հավակնում է լինել փորձագիտական եզրակացություն:**

Առաջնորդվելով երևակայությամբ՝ «գրախոսություն» կոչվածի հեղինակները, բազմահատույակի տեքստից կտրել-հանել են նախադասություններ կամ պարբերություններ, դրանց տվել կամայական մեկնաբանություններ, իսկ հեղինակներին վերագրել իրենց ցանկալի գնահատականներն ու եզրահանգումները, ինչն էլ դարձել է նրանց հանիրավի պիտակավորման հիմքը: Կանխակալ և սուբյեկտիվ մեկնաբանություններով ու հեղինակներիս սևացնելու դիտավորությամբ գրված՝ մերկապարանոց մեղադ-

րանքներով ու չփաստարկված պիտակավորումներով լեցուն այդ կույտը ոչ թե գրախոսություն է, այլ ավելի շուտ՝ **անանուն գրապարտագիր**: Բայց մենք համբերությամբ կշարունակենք այն անվանել «գրախոսություն», իսկ հեղինակներին՝ (իրականում՝ հեղինակին) «գրախոս» կամ՝ բազամազանության համար, նաև՝ «գրախոսներ»:

գ) Հատորում առկա մեթոդաբանական «մեղանչումները»:

Բազմահատորյակի խմբագրակազմին ու հեղինակներին ներկայացվող մեղադրանքների քննությունն սկսենք մեթոդաբանական խնդիրներից: «Գրախոսները» համոզված են, որ երրորդ հատորի երկու գրքերը գրված են *«հնացած ու քննություն չբռնող մեթոդաբանությամբ»*: «Գրախոսության» էջ 46-ում կարդում ենք. *«Մարքսիստական մեթոդաբանության ու քաղաքական կուսակցությունների պատմությունը առանցքային դիտելով՝ հայ ժողովրդի պատմության մատուցումը կատարված աշխատանքը վերածել են հնամաշ ու քննություն չբռնող մեթոդաբանության հիման վրա պատրաստված հնամաշ մի խեղկատակության»*: Նախ՝ սա ոչ թե նախադասություն է, այլ անկապ բառերի կույտ: Պարզ չէ՝ ովքեր են «աշխատանքը վերածել... խեղկատակության», մեթոդաբանությունն է հնամաշ, թե՞ խեղկատակությունը, թե՞ երկուսն էլ իրար հետ, առանցքային է դիտված մարքսիստական մեթոդաբանությունը, թե՞ դրա պատմությունը, և ինչու է հնամաշ բառը նույն նախադասության մեջ երկու անգամ գործածվել²:

² Վերոհիշյալ քաղվածքից հստակ երևում է, որ հատորներում սխալ գտնելու և տեքստը սևացնելու խմբագրի ձգտումն այնքան մեծ է եղել, որ նա ոչ միայն չի կարողացել նորմալ նախադասություն կազմել, այլ «հնամաշ» բառը երկու անգամ գործածելով, սկամայից ջրի երես է հանել իր կանխակալ մոտեցումները:

Երկրորդ՝ եթե «գրախոսն» ուզում է ասել, որ գրքի հիմքը մարքսիստական մեթոդաբանությունն է, ապա այդ դեպքում ինքը հայտնվում է հակասության մեջ: Էջ 47-ում նա պնդում է, որ *«Անհարկի ու անտեղի ուռճացված են քաղաքական կուսակցությունների գործունեության, կամավորական շարժման դրվագները, որոնց նվիրված հատվածները գերակշռում են Մեծ եղեռնի պատմության կարևոր ու ճակատագրական դրվագներին»*: Մեծ եղեռնի և կամավորական շարժման հիմնահարցերին առայժմ չանդրադառնալով՝ նշենք, որ հեղինակներին մարքսիստական մեթոդաբանություն կիրառելու մեջ մեղադրող «գրախոսները» մարքսիզմն էլ չեն յուրացրել, քանզի տեղյակ չեն, որ այդ ուսմունքը մերժում է պատմության մեջ քաղաքական կուսակցությունների հանգուցային դերը:

«Գրախոսներին» դուր չի եկել, որ գրքում իբր մի քանի անգամ (**իրականում՝ միայն մեկ անգամ**) նշվում է Վանի համար մղված մարտերում աչքի ընկած, հեծելավաշտի դասակի հրամանատար Ս.Մ. Բուդյոննու անունը (ԽՍՀՄ ապագա մարշալ): Վկայակոչենք «գրախոսների» դժգոհությունը փաստող քաղվածքը. *«Կազմված տեքստը գիտականության տեսանկյունից խոցելի լինելուց զատ ակնհայտորեն կրում է խորհրդային ժառանգության հետքը. օրինակ՝ հեղինակը անհասկանալի պատճառներով մի քանի տեղում հիշատակում է Ս. Բուդյոնի³ անունը, ով հետագայում կդառնա խորհրդային մարշալ, սակայն Առաջին աշխարհամարտի տարիներին ընդամենը կրոսեր հրամանատար էր: Խորհրդային պատմագրության ժամանակաշրջանում դա հասկանալի կլիներ, անկախ Հայաստանում՝ ոչ»* (էջ 32):

Դժվար չէ նկատել, որ ամեն մի խորհրդայինի նկատմամբ «ազատ» մտածող Դեմոյանն ու նրա գործընկերներն ունեն

³ Ընդդիմախոսներն այնքան «չեն սիրում» բոլշևիկներին, որ Բուդյոննու (իրենց կարծիքով Բուդյոնի) ազգանունը գրել են ոչ թե երկու, այլ՝ մեկ *Գ*-ով:

ընդգծված բացասական վերաբերմունք: Դա երևում է նաև «գրա-խոսության» մեկ այլ տեղում (էջ 26)՝ նրանց կողմից մարքսիստական պատմագրությանը տված գնահատականից, որն իրականում հիշեցնում է հենց մարքսիզմ-լենինիզմի աղճատված ժամանակները՝ ստալինիզմը: Նրանց կարծիքով՝ մենք չենք ազատվել *«մարքսիստական պատմագրության չուզոնսա-պրոլետարիատական կապանքներից»* (Դեմոյանի մտքի ծունդ նախավերջին՝ *«չուզոնսա-պրոլետարիատական»* բառն ընդգծել ենք, հուսալով, որ խեղճ պրոլետարիատը դրանից չի ահաբեկվի):

Վերադառնալով կուսակցությունների գնահատականի թեմային՝ ավելացնենք, որ զավեշտալի է նաև Դեմոյանի թիմի այն պնդումը, թե հատորում առանձնահատուկ տեղ է հատկացվել ՀՅԴ պատմությանը, և աշխատանքը գրված է դաշնակցության դիրքերից (տե՛ս գրիս. 15-րդ էջը՝ *«ՀՅԴ ձևավորումը, ի համեմատություն մյուս կուսակցությունների, ներկայացվում է յուրահատուկ նկարագրով՝ կուսակցությանը վերագրելով բացառիկ գործառնություն»*: Նախ՝ նման բան չկա. ավելին՝ ազգային կուսակցությունների, այդ թվում՝ ՀՅԴ սկզբնավորման պատմությունը շարադրվել է գրեթե նույն ծավալների մեջ, ինչ արմենականներին ու հնչակյաններին վերաբերող հատվածները: Այն, որ XX դարասկզբի իրադարձություններում ՀՅԴ գործունեության դրվագները գերակշռում են, միանգամայն հասկանալի է, քանի որ XIX դարավերջին՝ օսմանյան տիրապետության դեմ անհավասար պայքարում մյուս կուսակցությունները բավականաչափ թուլացել էին և ավելի նվազ ազդեցություն ունեին հայ հասարակության մեջ:

Չենք կարող համաձայնել ընդդիմախոսների հետ այն հարցում, որ կամավորական շարժմանը՝ հայության ճնշող մեծամասնության մասնակցության մասին մեր թեզը *«դաշնակցական կուսակցական պատմագիտության թեզերից է, որն ունի որոշակի*

նպատակներ» (էջ 31): Հանրահայտ է, որ կամավորական շարժումն իր բնույթով եղել է համաժողովրդական շարժում և չի հետապնդել կուսակցական որևէ նպատակ: Այլ հարց է, որ դրանում ՀՅԴ-ն, անկասկած, եղանակ է ստեղծել:

Կոթողային խայտառակություն «հայտնաբերած» մեր «գրախոսները» կաղում են նաև հայ մշակույթի պատմության, դրանում հայ ազգային կուսակցությունների տեղի ու դերի գնահատման հարցերում: Նրանք առաջին գրքի 499-րդ էջում հայտնաբերել են *«մտքի զեղումներ»*, որի տակ հասկացել են ՀՅԴ գաղափարախոսության հիմքը դարձած՝ մեր ազգային ու համամարդկային արժեքների համադրությունը: Նրանց կարծիքով անընդունելի է նաև հետևյալ միտքը. **«...Ուստի կրկնելով հայկական մշակույթին բնորոշ գործառույթները՝ ՀՅԴ-ն դարձավ հայկականության դարավոր ավանդույթներին հավատարիմ այն ուժը, որը նոր ժամանակներում շարունակեց հայոց պատմության հին շրջանից (հելլենիզմ) և միջնադարից (արևելաքրիստոնեական մշակույթ) հայտնի նույն համադրական գործառույթները»:** Այս նախադասությունը բավարար է, որ Դեմոյանն ու իր գործընկերները հանգեին հետևյալ եզրակացությանը. *«Սա ակնհայտորեն կուսակցական պատմագիտության տարրերով ու անհասկանալի կենսափիլիսոփայությամբ համեմված մտքի զեղումներով լի նախադասություն է» (էջ 15):*

Այո՛, նոր ժամանակներում գերազանցապես ՀՅԴ-ն է իրականացրել նման համադրություն՝ ի տարբերություն բուլշևիկների և այլոց ապազգային մտածելակերպի: Հայկական մշակույթն ի վերջո Արևելքի ու Արևմուտքի միջև համադրական գործառույթներ է իրականացրել, և հայ ազգային կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության կողմից դրանց շարունակումը տվյալ ժամանակաշրջանում նրանց հայկականության վկայությո-

յունն է եղել: Ի՞նչ զարմանալի բան կա, որ նույնը եղել է նաև նախորդ դարաշրջաններում և ինչո՞ւ է այդ ամենը *«անհասկանալի կենսասփիլիսոփայություն»*: Ստիպված սկսում ես կասկածել՝ հայկական է արդյոք մեր «գրախոսների» կենսասփիլիսոփայությունը:

Ինչ վերաբերում է ընդհանրապես հայ քաղաքական կուսակցությունների պատմությունն առանցքային դիտելու իրողությանը, որը թերություն է համարում «գրախոսը», իրականում երրորդ հատորի գույգ գրքերի **հիմնական առավելություններից է**, որովհետև պատմությանը քիչ թե շատ ծանոթ ամեն մարդ գիտի, որ **Հայոց պատմության 1885-1918 թթ. առանցքային սուբյեկտները հենց քաղաքական կուսակցություններն են, որոնց պատմությունը խորհրդային տարիներին կամ չի գրվել կամ կեղծվել է**:

Ազգային կուսակցությունների դիրքերից բազմահատորյակը գրելու մեղադրանքի թեման փակենք խորին ու հորինված պնդումներով լի ևս մեկ քաղվածքով՝ մասնագիտական գնահատականը թողնելով պատմաբաններին. *«Կուսակցական ծիրից դուրս չեն պարզաբանվել արևմտահայ ու արևելահայ մտավոր և գաղափարախոսական փոխառնչությունների, գաղափարների ու տեսակետների բախման, ինչպես նաև երկու կողմերում առկա կարծրատիպերի ձևավորման սկզբնական և վերջնական փուլերը»* (էջ 6):

«Գրախոսությունում» որպես կանոն վիճարկվում է հատկապես այն ամենը, ինչ նոր է և գրված է հայրենասիրության ու ազգային պատմության դիրքերից: Այդ իմաստով «գրախոսների» համար վիճելի թեմա է դարձել նաև հատորի նորույթներից մեկը՝ հայոց պատմության նոր ժամանակաշրջանի պարբերացման խնդիրը: Այս հարցը բազմիցս քննարկվել է խմբագրական խորհրդի նիստերում, և շատ առողջ բանավեճի արդյունքում հավանության է արժանացել վաստակաշատ պատմաբան, երջանկահիշատակ պրոֆ. Վ. Դիլոյանի առաջարկած համոզիչ ու գի-

տաքաղաքական առումով անխոցելի տարբերակը՝ ինչպես համաշխարհային, այնպես էլ հայոց պատմության նոր դարաշրջանն ընդգրկում է XVII դ. կեսերից մինչև 1918 թ. ընկած ժամանակները:

Այս թեզը ընդդիմախոս-խմբագիրը համարում է չհիմնավորված, թեպետ համոզված է, որ «**Հայ ժողովրդի պատմության նոր պարբերականացումը** (վերջին բառի ընդգծումը մերն է) **նորագույն ժամանակի անհրաժեշտություն է**» (գրիս., էջ 4, 5): Մեթոդաբան խմբագիրը կասկած չունի, որ «**խմբագրակազմը մեկ այլ ծայրահեղության մեջ է ընկնում՝ փորձելով արհեստականորեն, շինծու կերպով նոր պատմության շրջափուլը պայմանավորել հայ ազգային-ազատագրական պայքարի սկզբնավորմամբ և այն անգլիական հեղափոխության ու համաշխարհային պատմության նոր ժամանակաշրջանի հետ համապատասխանեցնելով՝ ահա այսպիսի մի ձևակերպմամբ**. «...**Հատկանշական է, որ այդ փուլն ուղղակիորեն համապատասխանում է համաշխարհային պատմության նոր դարաշրջանին՝ անգլիական հեղափոխության ժամանակաշրջանին**» (էջ 3):

Դեմոյանը՝ հայոց նոր պատմությունը համաշխարհային պատմության հետ նույն ժամանակագրական շրջանակներում տեսնելու մեր թեզը «ջրելուց» հետո, այնքան է ոգևորվել, որ «**գավեշտական եզրակացություն**» է համարում մեր հեղինակած հետևյալ առողջ միտքը, որի տակ պատրաստ ենք նորից դնել մեր ստորագրությունները. «**Վերոհիշյալ հանգամանքը մի անգամ ևս հաստատում է այն իրողությունը, որ ինչպես հայ, այնպես էլ աշխարհի այլ ժողովուրդների անցած պատմական ուղին շատ ընդհանուր կողմեր ունի, և հայոց քաղաքակրթությունը համաշխարհային քաղաքակրթության անբաժան մասն է** (գիրք 2, էջ 4)»: Բայց Դեմոյանը գտնում է, որ «*Սա ոչինչ չստող, հրապարակախոսական ոճով արված հետևություն է... Հերթապահ ձևա-*

կերպումների փոխարեն կուռ հիմնավորումներով պետք է տրվեր նոր պատմության տարբեր ժամանակափուլերի **պարբերականացման** գիտական հիմնավորումները, դրանց հիմքերը, և բոլորովին էլ պարտադիր չէ ազուցել հայոց պատմության ժամանակագրությունը այլ երկրների ու ժողովուրդների պատմության **պարբերականացմանը**» (գրխ. էջ 5, վերջին բառի ընդգծումը դարձյալ մերն է):

Այստեղ ևս Դեմոյանը շտապել է իր եզրակացություններում և, ինչպես կհամոզվենք, հայտնվել տխուր վիճակում: Նա չի ուզում տեսնել, որ առաջին գրքի առաջաբանում ընդհանուր գծերով նոր պատմության նման պարբերացումը հիմնավորված է (տե՛ս էջ 3-4), իսկ դրան ընդհանուր և ավելի հանգամանակից անդրադարձ կլինի բազմահատորյակի առաջին հատորում, որը ձեռագիր վիճակում է:

Մենք պնդում ենք մեր տեսակետը, ըստ որի՝ հայոց նոր պատմությունն սկսվում է XVII դ. կեսերից, երբ ազգային-ազատագրական շարժումները նոր թափ էին ստանում. կաթողիկոս Հակոբ Զուղայեցու գլխավորությամբ 1677 թ. էջմիածնում գումարված գաղտնի ժողովի որոշմամբ պատվիրակություններ են ուղարկվում եվրոպական երկրներ, իսկ հաջորդ դարում այդ պայքարը տալիս է իր առաջին պտուղները՝ Սյունիքում և Արցախում, ի թիվս մելիքությունների, կյանքի են կոչվում հայկական ինքնիշխան պետական կազմավորումներ: Իսկ դարաշրջանն ավարտվում է 1918 թ. մայիսյան հերոսամարտերով և անկախ պետականության վերականգնման պատմական իրադարձությամբ: Նույն դարաշրջանը համանման բախտորոշ իրադարձություններով է հարուստ նաև քաղաքակիրթ այլ ժողովուրդների համար: Բայց մեր հայեցակարգային այս մոտեցումը փոխանակ ուրախացնել հայ պատմաբանին, ընդհակառակը՝ ականայից վշտացրել է և կասկածներ առաջացրել նրա մոտ այն հարցում, որ «**հայոց քա-**

ղաքակրթությունը համաշխարհային քաղաքակրթության անբաժան մասն» է: Ուստի, իրականում Դեմոյանն է իր ապագգային մտքերը *«սագուցել... այլ երկրների ու ժողովուրդների պատմության պարբերականացմանը»*:

Այստեղ ստիպված ենք ընդգծել, որ գործ ունենք Դեմոյանի ոչ միայն ապագգային մտածելակերպի հերթական դրսևորման, այլև իր իսկ խոսքերով՝ իրական *«աղաղակող անգրագիտության»* (գրիս. էջ 8) հետ: Ստիպված ենք փաստել, որ «պարբերացում», այն է՝ ռուսերեն «периодизация» պատմական հասկացությունն առհասարակ ծանոթ չէ Դեմոյանին, քանի որ այն նրա մոտ քանիցս ներկայանում է որպես *«պարբերականացում»* (տե՛ս նրա մտքերից «գրախոսության» 4, 5, 8-րդ էջերից մեջբերված քաղվածքներում մեր ընդգծումները): Դիմենք մեր նշանավոր լեզվաբանների օգնությանը: Ինչպես ակադեմիկոս Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (Եր., 1976), այնպես էլ Աշոտ Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում» *«պարբերականացում»* բառ չկա: Բայց առաջինի 1202-րդ և երկրորդի 927-րդ էջերում կա դրա համարժեք «պարբերականություն» բառը, որ նշանակում է պարբերական լինելը, պարբերական բնույթ ունենալը, որևէ բանի պարբերաբար հանդես գալը, այսինքն՝ միանգամայն այլ իմաստ ունեցող բառ, որ կվայելեր **պարբերաբար** սայթաքող ու մատերիալներ գրող Դեմոյանին: Բայց «պարբերացնել» և «պարբերացում» բառերը, ի դժբախտություն Դեմոյանի, նույն բառարաններում կան և, որ «պարբերացում» նշանակում է՝ «պատմական հաջորդական փուլերի բաժանելը, շրջաբաժանելը, պերիոդիզացիան»: Հետևաբար, խորհուրդ կտայինք՝ ուրիշի աչքում փուշ տեսնելուց առաջ, բարի լինել հանել սեփական աչքի գերանը:

դ) Բազմահատորյակում տեղ գտած *«Նեղազգայնական ու ռասիստական երանգներ կրող, հակագիտական ձևակերպումների»* կապակցությամբ:

Մենք կգարմանայինք, եթե ստալինյան ժամանակների շնչով գրված այս մատերիալում չգտնեինք քաղաքական մեղադրանքներ: Դրանք բավական շատ են և կազմում են գրախոսության «ողնաշարը»:

Փաստորեն կասկածի տակ անելով հատորներում ժողովրդագրական խնդիրների՝ նորոյթ լինելու փաստը և դրանց գիտաքաղաքական կարևորությունը՝ գրախոսները էջ 5-ում մեջբերում են կիսատ մի նախադասություն. *«...ուշ միջնադարում և նոր ժամանակներում Հայաստանում տեղի ունեցած ոչ հայանպաստ էթնոկրոնական գործընթացների»* (էջ 5) *ուսումնասիրությունը*: *«Հեղինակները չեն գիտակցել, որ եզրույթներն ու բառակապակցություններն այնքան էլ գիտական չեն, ոնեն տեղային ազգայնականության և ոչ ակադեմիական երանգներ»*: Պարզաբանենք՝ «ոչ հայանպաստ էթնոկրոնական գործընթացներ» բառակապակցության տակ հստակ հասկացվում է օտար էթնիկ տարրերի մուտքը Հայկական լեռնաշխարհ և բռնի մահմեդականացման ու թուրքացման գործընթացը: Դրանում ազգայնականության ընկալումը թողնում ենք ընթերցողին:

«Կոթողային խայտառակության» խմբագիրը, մեջբերելով նախադասության միայն մեկ հատված, երրորդ հատորի երկրորդ գրքում հայտնաբերել է *«ազգայնականության»* նոր դրսևորում: Նա հատորի 8-րդ էջից (իրականում՝ քաղվածքը 86-րդ էջում է) վկայակոչել է հետևյալ միտքը՝ **«բազմաթիվ ավազակային որջերի հիմնահատակ ավերումը թույլ տվեց բացել ճանապարհների այն հանգույցները, որոնց վրա հիմնվելով, հետագայում 1918-**

1920 թթ. **հնարավոր եղավ ձեռավորել առաջին հանրապետության հայկական դիմագիծը**»։ Կոնտեքստից կտրված այս շարադրանքը, որի հեղինակը պ.գ.դ. Գ. Խոդիկյանն է, ցնցող եզրահանգման է բերել ինտերնացիոնալիստ խմբագրին։ Նա համոզված է՝ որ «Նեղազգայնական ու ռասիստական երանգներ կրող այս ձևակերպումը պարարտ հող է ստեղծում արևմտյան պատմագրության մեջ տիրապետող դարձող այն տեսակետի համար, որի համաձայն՝ Կովկասում և Մերձավոր Արևելքում տեղի էին ունենում փոխադարձ էթնիկ զոտումներ և ցեղասպանությունը լոկ դրվագ է այդ փոխադարձ բախումների» (տե՛ս էջ 12)։

Սա գիտական անբարեխղճության և 1937 թվականին բնորոշ մատնագրի ցայտուն օրինակ է. երկրորդ գրքի 86-րդ էջից վերցված ու կեղծված այս կես նախադասությունից առաջ կա մի ամբողջ պարբերություն, որտեղ **ճիշտ հակառակն է նշվում**։ Այնտեղ վկայակոչված է մի հատված 1906 թ. փետրվարին կայացած ՀՅԴ գինվորական խորհրդակցության որոշումից (փաստաթուղթը վերցված է ՀՅԴ Բոստոնի արխիվից և տեղ է գտել «Նիպեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար» ժողովածուի Բ հատորի 251-րդ էջում)։ Մեջբերենք այն. «**նախայարձակ լինել և ջնջել այն բոլոր որջերը, լինեն դրանք մեծ կամ փոքր, որոնք առազակային կենտրոններ էին, ...որոնք խանգարում էին Գանձակից Շուշի, Շուշուց՝ Գորիս եւ Նոր Բայազետից՝ Գորիս հաղորդակցութեան**»։

Քաղվածքից միանգամայն պարզ է, որ տվյալ պարբերության մեջ խոսքը ոչ թե թաթարական խաղաղ գյուղերի, այլ 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ հայկական բնակավայրերի վրա հարձակման ու թալանի հենակետերի վերածված՝ էթնիկ շփման գոտում գտնվող **ավազակային կենտրոնների** կամ **որջերի** մասին է։ Ի դեպ, քիչ անց շարադրանքում նշվում է, որ այդ որոշումը գործարկվել է միայն մասնակիորեն։ Արցա-

խում և Զանգեզուրում ինքնապաշտպանական խմբերի կողմից թաթարական նման գյուղերի գրավումից հետո հայտնաբերվել է տեղի հայերից թալանված մեծ քանակությամբ ունեցվածք՝ կովեր, գյուղատնտեսական գործիքներ և այլն: Աղբյուրներում բազմաթիվ նման վկայություններ կան Գյուլափիլու, Ավդալ, Միրաշալու և այլ գյուղերի կապակցությամբ: Դրանք ամռանը սարեր բարձրացող քոչվորների համար իբրև հայկական գյուղերի վրա հարձակումների հենակետ ծառայող ու միաժամանակ՝ երթևեկող մարդկանց սպանությամբ ու թալանով զբաղված «ղաչաղանցներ» էին, ուստի ո՛չ ՀՅԴ որոշումը և ո՛չ էլ նրան տրված մեր մեկնաբանությունը ոչ մի կապ չունեն էթնիկ գտումների հետ, որը Դեմոյանի հիվանդ երևակայության ծնունդն է, և նրա այս մատերիալը տպագրվելուց հետո իսկապես որ կարող է օգտագործվել, բայց ոչ թե եվրոպացիների, այլ ադրբեջանցիների կողմից:

Ի դեպ, Դեմոյանը մեկ այլ առիթով նշում է նաև, որ մենք չենք օգտագործել ՀՅԴ Բոստոնի արխիվի նյութերը, մինչդեռ՝ «Նիփթեր ՀՅ դաշնակցութեան պատմութեան համար» 12 հատորանոց հայերեն (ոչ թե անգլերեն) ժողովածուն հենց այդ արխիվի տպագիր վավերագրերից է բաղկացած: Ներկա ակադեմիական բազմա-հատորյակում դրանք լայնորեն օգտագործվել են որպես սկզբնաղբյուրներ: Կարող էինք նաև նույն փաստաթղթերի բնօրինակները մեջբերել, եթե Դեմոյանի նման գործուղումների լայն հնարավորություններ ունենայինք: Բայց դրանից հետո էլ ռասիզմի մեջ չէինք մեղադրի մեր գործընկերներին՝ տուրք տալով ադրբեջանցի պատմաշինարարների դրոյթներին:

Մի հարցում էլ Դեմոյանին մերկացնենք՝ ջրի երես հանելով մեզ հասցեագրած նրա կեղծ մեղադրանքներն ու պատկերացումները մի հույժ կարևոր, գիտաքաղաքական նշանակություն ունեցող խնդրում: Խոսքը ինչպես այս, այնպես էլ «Հայոց պատմութեան»

յուն» ակադեմիական հրատարակության բոլոր հատորներում կարմիր թելի նման անցնող՝ **պետականության գաղափարի** մասին է:

Այս ծրագրի իրականացման հոլովություն մենք արմատապես վերանայել ենք թյուր և քաղաքականապես վտանգավոր այն պատկերացումը, որ իբր դարեր շարունակ հայ ժողովուրդը զուրկ է եղել պետականությունից: Իրականությունն այն է, որ Հայոց պետականությունը, որ 5 հազար տարվա պատմություն ունի, գրեթե չի ընդհատվել, այլ զանազան դրսևորումներով՝ թագավորությունների, իշխանությունների, ինքնավարությունների, լեռնային կիսանկախ համայնքների, սղնախների, մելիքությունների, ինչու չէ՛՝ հոգևոր իշխանության, և, վերջապես անկախ պետականության տեսքով հասել է մինչև XXI դար, այսինքն՝ պետականության հարատև շղթան մշտապես եղել է: Բայց արի ու տե՛ս, որ դրա համար էլ կարող ես հանդիմանվել, այն էլ հայագիտական մի կարևոր հաստատության գիտական խորհրդի անունից ներկայացված ամբաստանագրով: Դիմենք փաստերին:

Առաջին գրքի առաջաբանի 4-րդ էջից վկայակոչվում է հետևյալ միտքը. **«Օտար տիրապետության դեմ պայքարի կենտրոններ են դառնում հայկական պետականության բազմաթիվ հատկանիշներ կրող Սյունիքի ու Արցախի մելիքություններն ու սղնախները: Դրանց հետագա ամրապնդումը 1720-1740-ական թթ. հանգեցնում է այդ երկրամասերում որոշակի ժամանակով հայոց պետականության վերականգմանն ու ճանաչմանը»:** Հիշեցնենք, որ այս քաղվածքը մեջբերված է առաջաբանից, որտեղ, որպես կանոն, տրվում է հատորի համառոտ բովանդակությունը, ներկայացվում են խնդրի արդիականությունը, նորույթը և այլն, այսինքն՝ այն, ինչ արվել է տվյալ դեպքում: Բայց կեղտ փնտրող Դեմոյանը (այս անգամ՝ հաստատ միայնակ) այնքան է բանակա-

նությունը կորցրել, որ վերոհիշյալ հատակ ձևակերպմանը տվել է հետևյալ խորթին ու ապագգային մեկնաբանությունը. *«Նման պնդումները կողմնակալ դատողությունների արդյունք են, և քանի դեռ չի բերվել «պետականության հատկանիշներ» ձևակերպման հատակ բացատրությունը և դրա հիմնավորումը կոնկրետ մեխիքությունների պարագայում: Այս տեսակ պնդումը նաև հակագիտական կարելի է համարել, մանավանդ որ նույն տեղում այսպիսի մի պնդում էլ կա: Նման հիմնավորման թերևս միակ փորձն ամերիկացի է այս նախադասության մեջ»:* Այս բերվում է մեր տեքստի մնացած հատվածը, որը ևս, իբր համոզիչ կովաններ չի տալիս Արցախի ու Սյունիքի իշխանությունները պետականության դրսևորումներ համարելու համար. **«Բանն այն է, որ պետականության հատկանիշերի մի մասի կորուստն ամենևին չի նշանակում դրա լիակատար բացակայություն»:**

Սույն մեջբերմանն անմիջապես հաջորդում է Դեմոյանի գիտաքաղաքական ու մեթոդաբանական գնահատականը. *«Ընդհանրապես տեսական գիտելիքների պակասն ու մեթոդաբանական նոր մոտեցումների բացակայությունը առավել ակնառու են դառնում հենց այս ժամանակաշրջանի դեպքերն ու անցքերը ներկայացնելիս ու վերլուծելիս»:*

Վրդովեցուցիչ է, որ անձնական հաշիվներ մաքրելու նպատակով հայ համարվող մարդն ի վիճակի է վիճարկել անգամ այս խնդիրը: 1720-1740-ական թթ. Արցախի և Սյունիքի մեխիքությունները պետականություն համարելու հարցում իր կասկածները փարատելու համար Դեմոյանը կարող էր հանգամանորեն ծանոթանալ առաջին գրքի 43-ից 69-ը էջերում տեղ գտած ընդարձակ շարադրանքին, որտեղ խոսվում է մեխիքությունների՝ պետականությանը բնորոշ գրեթե բոլոր հատկանիշներն ունենալու, իրավական կարգավիճակի, զորքի, ճանաչման հասնելու և այլնի մասին:

Ինչպես տեսնում ենք, «գրախոսություն» վերնագրի տակ «խայտառակություն» փնտրող հայ պատմաբանն ինքն է հայտնվել իրական խայտառակության մեջ՝ ակամայից շրջանառության մեջ դնելով թուրք-ադրբեջանական այն կեղծ դրույթը, թե հայերը երբևէ չեն ունեցել պետականություն, առավել ևս՝ Արցախում ու Սյունիքում:

Այս «գրախոսությունում», ի տարբերություն «Հրապարակ» թերթում 2013 թ. հոկտեմբերի 10-ին գրած նյութի, քաղաքական մեղադրանքներ են ներկայացվում ոչ միայն Ա. Մելքոնյանին և պատմության ինստիտուտի նրա գործընկերներին, այլև ներկայիս հայ պատագիտական ողջ դպրոցին: Ըստ Դեմոյանի սուբյեկտիվ կարծիքի՝ *«մեր օրերում պատմագիտության ոլորտի հին սերնդի հեռացումից հետո իր լիակատար տիրապետությունն է հաստատել պատմաբանների մի շրջանակ, ովքեր ոչ միայն պատասխանատվություն չեն կրում անցյալը ազատ ոճով և խիջիայրոց մատուցելու համար, այլև թայֆայականության ու կոռուպցիոն գործելաոճի հետևանքով հասարակագիտական ոլորտում ամրագրել են վաղուց քրոնիկական բնույթ ստացած համատարած մարգինալացումն ու լճացումը»:*

Չգիտենք ինչ գնահատական տանք այս տողերին: Դրանց հեղինակը, իբր բարձր գնահատելով ավագ սերնդի պատմաբանների կատարած աշխատանքը, «ցավ» է ապրում այսօրվա վիճակի համար: Նա չի ուզում տեսնել, որ բազմահատորյակի խմբագրակազմի ու հեղինակների մեծ մասը մեր ավագ սերնդի ներկայացուցիչներն են՝ արդեն վաղուց կյանքի յոթերորդ տասնամյակը բոլորած, գիտական պատկառելի վաստակ ունեցող գիտնականներ, որոնց զգալի մասը, ցավոք, վերջին տարիներին կյանքից հեռացել է: Հենց մենք էինք նրանց խնդրել, որպեսզի ընդգրկվեին հատորների ստեղծման աշխատանքներում ու մեզ ուղղորդեին

պատմագիտական բազմաթիվ բարդ խնդիրներում: Հաճելիորեն նշենք, որ այդ առաքելությունը նրանք պատվով կատարեցին:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ մեջբերման մեջ տեղ գտած, գիտնականին ոչ վայել՝ *«թայֆայականություն»*, *«կոռուպցիոն գործելաճան»*, *«քրոնիկական բնույթ ստացած համատարած մարգինալացում ու լճացում»* ամոթալի ձևակերպումներին, նշենք, որ դրանք մեզ համար նորություն չեն: Զանազան հարցազրույցներում, տարբեր մարդկանց դեմ գրած մատերիալներում Դեմոյանն այդ բառապաշարը մշտապես շրջանառել է (տարօրինակ է, որ այս անգամ նրա բառամթերքից դուրս են մնացել նրան շատ բնորոշ *«լկոի»* ու *«ցինիկ»* եզրերը): Մենք միայն կարող ենք իրեն վերադարձնել իր սիրած՝ օտար *«մարգինալացում»* եզրույթը, որն ի դեպ ոչ թե ունի *«միջակայնացում»* իմաստը, ինչպես կարծում է Դեմոյանը, այլ նշանակում է *«լուսանցանշում»* (Ղարիբյան Ա., Ռուս-հայերեն բառարան, Եր., 1968, էջ 461), այսինքն՝ լուսանցքում հայտնվելը:

ե) Դիտողություններ հատորների հեղինակային կազմի, օգտագործված աղբյուրների և կառուցվածքի առնչությամբ:

Դեմոյանի ղեկավարած խումբը «գրախոսության» 4-րդ էջում զարմանք է ապրել, որ *«նման ծանրակշիռ հրատարակություն պատրաստելիս հիմնականում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատողներից կազմված խմբագրակազմը հատորների նախագծերի ու հայեցակարգերի քննարկման աշխատանքներում չի ներգրավել սիյուռքահայ անվանի պատմաբաններին, բացառությամբ եթովպահայ պատմության բաժնի հեղինակ Բ. Աճեմյանի: Սիյուռքահայ մասնագետները նույնիսկ չեն ներգրավվել ո՛չ*

խմբագրակազմում, ո՛չ էլ որևէ գլուխ կամ ենթագլուխ հեղինակելու գործում»:

Դժվար է ասել՝ գրախոսները հատորներում իսկապես չեն նկատել ինչպես մեր հանրապետության շուրջ 15 և արտասահմանյան 9 գիտահետազոտական ինստիտուտների ու կրթական հաստատությունների ճանաչված մասնագետների ազգանունները, որոնցից 11-ը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ են, 6-ը՝ թղթակից անդամներ, 2-ը՝ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ, 23-ը՝ գիտության դոկտորներ, 30-ը՝ թեկնածուներ (հեղինակների ցանկը կից ներկայացվում է՝ ըստ հաստատությունների և երկրների), թե դիտավորյալ կույր են ձևացել: Բա չասե՛ս՝ ոչ թե կույրն է կույր, այլ նա, ով չի ուզում տեսնել:

Ի գիտություն մեր «գրախոսների»՝ բազմահատորյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքում մենք սփյուռքահայ ճանաչված շատ մասնագետների (Ռ. Հովհաննիսյան, Վ. Դադրյան, Լ. Զեքիյան, Հ. Գևորգյան և ուրիշներ) առաջարկել ենք՝ ընդգրկվել խմբագրական խորհրդի մեջ և հեղինակել բաժիններ: Ցավոք, հիմնականում զբաղվածության և նոր ուղղափարությամբ ու արևելահայերենով գրելու դժվարության պատճառաբանությամբ նրանց մի մասը հրաժարվել է: Այնուամենայնիվ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ Լ. Զեքիյանը, Հ. Գևորգյանը, ինչպես և այլ մասնագետներ՝ շուրջ 10 երկրներից, դարձել են հեղինակներ:

Կարծում ենք, որ պարոն Դեմոյանը հոգեկան բավականություն կստանար, եթե իմանար, որ երրորդ հատորի երկու գրքերում Ա. Մելքոնյանի ղեկավարած ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակիցները հեղինակային ցանկում ընդամենը 23-ն են, իսկ մոտ 15 այլ հաստատություններ ներկայացնող մեր մյուս գործընկերները՝ 37-ը: Այնպես որ անիմաստ է Ա. Մելքոնյանի և պատ-

մության ինստիտուտի գործած «մեղքերի» համար թիրախավորել ամբողջ հայագիտությունը:

«Գրախոսները» դժգոհ են, որ երրորդ հատորի՝ Հայոց ցեղասպանության պատմության հատվածը չի հանձնարարվել ՀՅԹԻ գիտխորհրդին: Դեմոյանը մոռանում է, որ իր տնօրեն դառնալուց հետո մեկը մյուսի հետևից թանգարան-ինստիտուտից դուրս թողնվեցին Հայոց ցեղասպանության խնդիրներին առնչվող թեմաներով՝ Լ. Բարսեղյանի տնօրինության շրջանում պատրաստված գիտական կադրերը: Նրանց փոխարեն թանգարան-ինստիտուտը համալրվեց հիմնականում երիտասարդ աշխատակիցներով, որոնք նոր էին սկսում մասնագիտանալ այդ խնդիրների մեջ: Գիտական աստիճան ունեցողներն էլ, որ գիտխորհրդում փոքրամասնություն էին կազմում, մասնագիտացել էին ոչ թե հայոց, այլ համաշխարհային պատմության բնագավառում: Միանգամայն հասկանալի է, որ նման պայմաններում բազմահատորյակի խմբագրակազմը պետք է առաջնորդվեր ոչ թե *«ինքնսարսալ»* կամ *«կողմնակալ»* սկզբունքով, ինչպես նշվում է «գրախոսությունում» (էջ 7), այլ բացառապես մասնագետների պատրաստվածության աստիճանից ելնելով:

Տեքստերի շարադրանքը հանձնարարվեց այն մասնագետներին, որոնք տարիներ շարունակ զբաղվել էին տվյալ խնդիրներով և այդ հիմնահարցերի վերաբերյալ արդեն ունեին հրապարակած աշխատանքներ: Բայց «գրախոսությունում» կա նաև խոստովանություն, որ Դեմոյանին՝ որպես Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենի, առաջարկվել է ընդգրկվել բազմահատորյակի տվյալ գրքի խմբագրակազմում, սակայն նա «ի նշան բողոքի», հրաժարվել է: *«Բազմահատորյակի պրոֆեսիոնալ բարձր մակարդակով պատրաստելու ու դրա միջոցով սերունդներին լիարժեք ազգային պատմություն ու հիշողություն մատուցելու»*

ջատագով իրեն հորջորջող Դեմոյանը փաստորեն առաջնորդվել է ոչ թե «մասնագիտական պարտքով», ինչպես փորձում է ներկայանալ հանրապետության ղեկավարությանն ուղղված նամակում, այլ զուտ անձնական ամբիցիաներով: Հակառակ պարագայում նա նեղացածի կեցվածք ընդունելու փոխարեն, կընդգրկվեր խմբագրակազմում և մինչև վերջ կպաշտպաներ իր տեսակետները: Նման պահվածքը հուշում է, որ Դեմոյանն այդ հարմար պատրվակով պարզապես խուսափել է մասնակցել այնպիսի հարցերի քննարկմանը, որոնց ընթացքում կարող էր բացահայտվել նրա մասնագիտական, մեղմ ասած, տկարությունը:

«Գրախոսության» հեղինակներն ուղղակիորեն մեղանչում են ճշմարտության առջև՝ պնդելով, թե թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի կողմից Հայոց ցեղասպանության հատվածի վերաբերյալ 12 կետից բաղկացած դիտողություններն ու առաջարկները հաշվի չեն առնվել հեղինակների կողմից (էջ 7): Իրականում՝ դրանք ստանալուց հետո պատմության ինստիտուտի երկու բաժիններում կազմակերպվել են նոր քննարկումներ, որոնց ընթացքում դիտողությունների որոշ մասն ընդունվել է և տեքստերում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Մասնավորապես ավելացվել են օտար լեզուներով աղբյուրների հղումները: Դիտողությունների մյուս մասը հեղինակների կողմից չեն ընդունվել՝ դրանց սուբյեկտիվ գնահատականների և անհիմն մեղադրանքների պատճառով: Փոփոխված տարբերակը կրկին ուղարկվել է թանգարան-ինստիտուտ, որից հետո պատասխան չի ստացվել և միայն տարիներ անց՝ արդեն հատորի գրքերի տպագրությունից հետո, «գրախոսության» տեսքով ի հայտ է եկել սույն արձագանքը:

«Գրախոսները» նույն էջում կեղծ մեղադրանք են հնչեցնում՝ պնդելով, որ հատորի՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող

բաժնում թանգարան-ինստիտուտի կողմից հրատարակված աշխատանքներից որևէ հղում չկա: Իրականում տվյալ բաժնում հղվել են թանգարան-ինստիտուտի կողմից հրատարակված հետևյալ աշխատությունները՝ «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները», կազմող Լ. Բարսեղյան, Եր., 1999, (էջ 492), Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան (1915-1923 թթ.), «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, Եր., 2002, (էջ 524), Տերնտն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., 2003, (էջ 526, 527): Թանգարան-ինստիտուտի կողմից հրատարակված գրականությունը տեղ է գտել նաև մատենագիտության մեջ՝ «Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո», կազմող՝ Հ. Կիլիկյան, բուլղարերենից թարգմանությունը՝ Զ. Ղասաբյանի, Կ. Ճինգոզյանի, Եր., 1996:

Մինչդեռ ինչու՞ մատերիալի հեղինակները չեն համարձակվում ուղղակի խոստովանել, որ հղումներ չկան Դեմոյանի տնօրինության շրջանում թանգարան-ինստիտուտի հրատարակած աշխատություններին: Տպավորություն է ստեղծվում, որ նրանք անտեղյակ են Դեմոյանից առաջ թանգարան-ինստիտուտի կողմից հրատարակված աշխատանքներից կամ գուցե արժևորում են միայն նրա օրոք տպագրված գործերը: Այս առնչությամբ հարկադրված ենք արձանագրել, որ Դեմոյանի տնօրինության ընթացքում թանգարան-ինստիտուտի հրատարակած աշխատություններին հղում չի կատարվել այն պարզ պատճառով, որ տվյալ ժամանակահատվածում հրատարակվել են կամ տնօրենի՝ Հայոց ցեղասպանության հարցերի հետ ըստ էության առնչություն չունե-

ցող աշխատանքները, ալբոմ-մենագրությունները կամ էլ գերազանցապես թարգմանված գրքեր: Բազմահատորյակի հեղինակները գերադասել են հղումներ տալ բնագրերին, այլ ոչ թե թարգմանված վերարտադրություններին:

«Չնկատելով» տողատակերում առկա արխիվային հարուստ նյութերի հղումները՝ «աղբյուրագետները» փորձում են հերքել այդ մասին խմբագրակազմի ամփոփումը. *«այս պնդումը, մեղմ ասած, խմբագրակազմի ցանկությունն է և բոլորովին չի համապատասխանում իրականությանը»* (էջ 4): Բավական է թերթել հատորը և պարզ կդառնա, թե ով է ճիշտ, ով՝ սխալ:

«Գրախոսների» մոտ «տարակուսանք» առաջացնելու պատճառներից մեկը հատորի երկու գրքերի կառուցվածքն է: Նրանք զարմացած են, թե ինչու առաջին գիրքը չունի վերնագիր, իսկ երկրորդը ունի: Փորձենք բացել «գրախոսների» փակ աչքերը. չգիտես ինչու, նրանք «չեն նկատել», որ այդ երկու գրքերը միասին կազմում են մեկ ընդհանուր հատոր, որում ներկայացված է հայոց պատմության նոր դարաշրջանը: Ուստի պատահական չէ, որ երրորդ հատորի ամբողջական վերնագիրը՝ **«Հատոր III, Նոր ժամանակաշրջան. (XVII դարի երկրորդ կես - մինչև 1918 թ.)»**, տեղ է գտել զույգ գրքերի տիտղոսաթերթերում: Ապա այդ ընդհանուր խորագրի տակ բերված է համապատասխան հատորի վերնագիրը՝ **«Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ)»** և **«Գիրք երկրորդ (1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին)»**: Պարզվում է՝ զարմանքի պատճառը երկրորդ գրքում ժամանակաշրջանը փաստող տարեթվերից հետո գաղթավայրերի, մամուլի և մշակույթի մասին հուշող բառերն են: Ստացվում է, որ դրանց առկայությունը երկրորդ գրքի վրա առ ոչինչ է դարձնում նախորդի վերնագիրը: Այ՛քեզ տրամաբանություն...

Պարզաբանենք՝ նոր ժամանակներում գաղթավայրերի, պարբերական մամուլի և մշակույթի ամբողջական պատմությունը լուսաբանող բաժինները երկրորդ գրքում են տրվել՝ նյութի ծավալների համամասնությունը պահպանելու նկատառումով: Այդ կապակցությամբ հատորի ընդհանուր առաջաբանի 9-10-րդ էջերում տրվում է անհրաժեշտ բացատրություն. **«Երրորդ հատորի երկրորդ գրքի ամբողջ երեք գլուխ սվիրված է նոր շրջանի հայ մշակույթի, գիտության, գրականության, արվեստի տարբեր ճյուղերի քննարկմանը»:** Բայց՝ արի ու տե՛ս, որ ցանկության դեպքում նյութ փնտրողները միշտ «լուրջ բացթողումներ» գտնում են:

Կառուցվածքային ու մեթոդաբանական բնույթի ևս մեկ «սխալի բացահայտում» երկրորդ գրքի տասնիններորդ գլխում. *«հայ մամուլի պատմության բաժնի չորրորդ ենթագլխում («Գաղթօջախների մամուլը»), Կոստանդնուպոլիսն ու Զմյուռնիան չեն դիտվում որպես գաղթօջախներ, իսկ գաղթավայրերի բաժնում (գլուխ քսաներորդ) Կոստանդնուպոլիսն ու Զմյուռնիան ներկայացված են որպես գաղութներ»:* Միանգամից նշենք, որ դարձյալ գործ ունենք շինծու մեղադրանքի հետ: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանը և մամուլի ու գաղթավայրերի պատմության մեր մյուս մասնագետները, նկատի ունենալով, որ Կոստանդնուպոլիսի ու Զմյուռնիայի մամուլը շատ հարուստ է, այն ներկայացրել են տասնիններորդ գլխի առաջին երեք ենթագլուխներում՝ (252-290-րդ էջեր)՝ հայ մամուլի սկզբնավորումից մինչև XX դարի առաջին քառորդն ընդգրկող ժամանակաշրջանը լուսաբանող շարադրանքում, որից հստակ երևում է, որ խոսքը գաղթօջախների մամուլի մասին է:

Անընդունելի է ընդդիմախոսների առաջարկը՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը 1853-1855 թթ. Ղրիմի պատերազմին» վերնագիրը (առաջին գիրք, էջ 296)՝ «Հայերը և Ղրիմի պատերազմը» տարբերակով փոխարինելու վերաբերյալ (գրիս., էջ 24): Առա-

չարկվող խորագիրը սխալ է, քանի որ կենթադրեր շարադրանք ընդհանրապես հայերի, հետո նոր՝ պատերազմին նրանց մասնակցության մասին: Նկատենք, որ նույն խնդրի կապակցությամբ մեթոդաբանական բնույթի դիտողություն անողն ինքն էր պարտավոր չսխալվել՝ մեր հեղինակած իրական վերնագրում՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը 1853-1856 թթ. Դրիմի պատերազմին», տարեթվերը փոխելով, պատերազմը «ավարտել» մեկ տարի շուտ՝ 1855 թ.:

Անշուշտ, պարտավոր էինք ստուգել մեր նշանավոր պատմաբան Զ. Կիրակոսյանի և անգլիացի Ք. Ուոքերի աշխատությունների մեջ տեղ գտած վկայություններն այն մասին, որ արևմտահայերի տեղահանության հրամանը տրվել է դեռ 1914 թ. հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 5-ը ընկած ժամանակահատվածում: Ծանոթանալով Դեմոյանի այդ դիտողությանը (տե՛ս գրիս. էջ 19) և տեղյակ լինելով նրա՝ օտար լեզուների իմացությանը, կարծում էինք, որ Ուոքերի գրքից բերված անգլերեն քաղվածքը պետք է փաստեր մեր «սխալ» պնդումը վերոհիշյալի վերաբերյալ: Վերընթերցելով անգլերենով մեջբերված այդ վկայությունը, համոզվեցինք, որ նորից գործ ունենք սարքովի մեղադրանքի հետ: Ինչո՞ւ ենք վստահել վերոհիշյալ հեղինակներին: Շատ պարզ՝ այդ իրավույթը մերն է, առավել ևս, որ խոսքը հայրենասեր պատմաբան Զ. Կիրակոսյանի ու անգլիացի հայասեր հեղինակ Ք. Ուոքերի մասին է:

26-րդ էջում Դեմոյանը «*ցնցող հայտնագործություն*» է համարում «*Վրաստան*» և «*Արևելյան Հայաստան*» հասկացությունների գործածությունը՝ հարց տալով, թե այդ աշխարհագրական անվանումների տակ ինչ է հասկացվում: Կարճ պատասխանենք՝ հասկացվում են աշխարհագրական այն տարածքները, որոնք ավան-

դաբար ենթադրվում են արդի գիտության մեջ: Այդ մասին կարելի էր կարդալ դայրոցական դասագրքում:

Վերջում, ավելորդ չենք համարում կրկին հիշեցնել, որ հատորների կառուցվածքի, հայեցակարգային մոտեցումների, հեղինակների ու թեմաների ընտրության, գրված տեքստերի ընդունման և այլ հարցեր լուծվել են տարբեր ձևաչափերով կազմակերպված քննարկումների, կլոր սեղանների ընթացքում: Գիտական ու քաղաքակիրթ մթնոլորտում մատնանշված բացթողումներն ու սխալները շնորհակալությամբ ընդունվել են և ուղղվել:

զ) Ժողովրդագրություն:

Բազմահատորյակի հեղինակներին ներկայացվող դիտողությունների մեջ որոշակի տեղ ունեն ժողովրդագրական բնույթի հարցերը: «Գրախոսները» ոչ միայն չեն նշում, որ ժողովրդագրական խնդիրների արծարծումը միանգամայն նորույթ է նախորդ՝ խորհրդային ժամանակների ութհատորյակի համեմատությամբ, այլև վիճարկելով մեր դրույթները՝ փաստորեն պաշտպանում են թուրք-ադրբեջանական պատմագիտական ու քաղաքագիտական շրջանակների տեսակետները:

Ըստ «գրախոսության»՝ «Հայոց պատմություն» բանահատորյակի երրորդ հատորի երկրորդ գրքում (էջ 416) տեղ գտած «թերություններից» է նաև Բաքվում 1918 թ. սեպտեմբերի 15-17-ը թուրք-թաթարների կողմից կոտորածի ենթարկված 30.000 հայերի փաստը: Մեզ համար անհասկանալի պատճառներով հարցականի տակ դնելով ու «վիճելի» համարելով նշված թվաքանակը՝ Դեմոյանը «գրախոսության» 31-րդ էջում գրում է. *«Վիճելի է 1918 թ. սեպտեմբերին Բաքվի հայության զոհերի թիվը: Խոսվում է ավելի քան 30000 զոհի մասին, այնինչ նույն էջում հղում են տալիս դեպ-*

քերի ականատես-հեղինակ Բախշի Իշխանյանին, ըստ որի՝ զոհերի թիվը 9.029 է, իսկ բոլոր զոհերի և մահացածների ընդհանուր թիվը կազմում է 13,207 (տե՛ս Բ. Իշխանյան, Բազուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 554)»:

Ըստ Դեմոյանի՝ ստացվում է, որ Բաքվում կոտորածի ենթարկված հայերի թիվը 13.207 էր: Մինչդեռ նման պնդումը ոչ միայն հակասում է մեզ հասած արխիվային մեծաթիվ վավերագրերի, ականատես-հուշագիրների, ժամանակի պարբերական մամուլի բազում հավաստի տեղեկություններին, այլև իր իսկ՝ Դեմոյանի մատնանշած Բ. Իշխանյանի վկայություններին:

«Գրախոսականի» հակագիտական ու հակահայկական տեսակետները քննելուց առաջ հարկ ենք համարում նշելու հետևյալը. տարակուսելի և խիստ վրդովեցուցիչ են վայ-պատմաբանի, առավել ևս 2006 թ. մինչ այսօր «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի» տնօրենի պատասխանատու պաշտոնը զբաղեցրած անձի կողմից հայերի կոտորածների առնչությամբ հեգնախառն ու երրորդ դեմքով արտաբերած՝ «վիճելի է», «խուժում է» արտահայտությունները: Տպավորությունն այնպիսին է, կարծես քննվող հարցը չի վերաբերում հարազատ ժողովրդին պատուհասած դժբախտությանը, մեր անմեղ նահատակներին: Եվ դա այն դեպքում, երբ տարբեր հարթակներում թուրքական և ադրբեջանական կեղծարարները, շարունակելով Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը, նույնպես առաջնորդվում են նման տրամաբանությամբ ու գործելակերպով՝ վիճելի համարելով հայերի կրած կորուստները:

Այժմ, հաշվի առնելով խնդրի քաղաքական կարևորությունը, հանգամանորեն անդրադառնանք Բաքվում 1918 թ. սեպտեմբերի 15-17-ը կոտորածի ենթարկված հայ բնակչության զոհերի թվաքանակի՝ «վիճահարույց» խնդրին: Նախ՝ պարզաբանենք «գրա-

խոսի» վկայակոչած աղբյուրի՝ Բ. Իշխանյանի տվյալները: Բաքվում հայերի սեպտեմբերյան կոտորածներից հետո 1918 թ. հոկտեմբերի 10-ին տեղի Հայոց Ազգային խորհրդին կից ստեղծվեց «Անկետային հանձնաժողով՝ Բ. Իշխանյանի նախագահությամբ» (ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 118, թ. 1), որն ուսումնասիրեց հայերի կրած մարդկային ու նյութական կորուստների չափը: Ուսումնասիրության արդյունքները տեղ գտան Բ. Իշխանյանի «Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրությունն սեպտեմբերեան անցքերի 1918 թ.» (Թիֆլիս, 1920) մեծարժեք աշխատության մեջ:

Հավաքված վիճակագրական հարուստ տեղեկությունների, անկետային ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության հիման վրա Բ. Իշխանյանը «Ամփոփումներ եւ եզրափակումներ» գլխում (Բ. Իշխանյանի աշխատության համապատասխան էջերի պատճենները կցվում են) հայ բնակչության զոհերին բաժանել է երեք կատեգորիաների.

Ընդհ. թիվը

1. Մրաժության կամ կոտորածի զոհեր
(բոլոր կարգի սպանվածները) - - - - - 12.255
2. Մահացության զոհեր
(բոլոր կարգի մեռածները) - - - - - 13.207
3. Բռնության զոհեր
(բռնության բոլոր հարվածներին ենթարկվածները) -- 3.598

1-ին և 2-րդ կատեգորիաների զոհերին Բ. Իշխանյանը բնորոշել է որպես «ֆիզիկական գոյութեամբ ոչնչացած զոհեր (սպանուածներ և մեռածներ միասին)» (Իշխանեան Բ., նշվ. աշխ., էջ 185):

Հանրագումարի բերելով վերոնշյալ թվերը՝ Բ. Իշխանյանն արձանագրել է. «Եթէ այդ վերջին կամ առաջին երկու խոշոր կաթեգորիաններին աւելացնենք երրորդը, բոլորը համախմբելով մի աւելի ընդհանուր և միաձուլիչ անուան տակ՝ Բագուի մեծ սար-

սափների կամ թուրք-թաթարական բարբարոսութեան զոհեր կստանանք ոչ պակաս, քան 29.060 հոգի կամ հայ բնակիչների թուի 32.45%: Դա է Բագուի հայութեան տուած բոլոր կարգի զոհերի ընդհանուր թիւը...» (տւյն տեղում):

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, Բ. Իշխանյանը Բաքվում կոտորածի ենթարկված հայերի թիւը նշում է ոչ թե 13.207, այլ՝ 29.060 հոգի: Բաքվի Հայոց Ազգային խորհրդի պատվավոր նախագահ Բագրատ եպս. Վարդազարյանի տվյալներով՝ «25 բեռնատար մեքենաներ 4 օրերի ընթացքում անընդմեջ, գիշեր ու ցերեկ տեղափոխում էին դիակներ, իսկ այն դիակները, որոնք չէին հասցնում տեղափոխել, թաղում էին Սայյանսկի զորանոցների շրջանում» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 9):

Հարկ է նշել, որ խաղաղ բնակչությունից բացի զգալի կորուստներ է տվել նաև հայ զինվորականությունը: Անխնա ոչնչացվել են Այլաթի հատուկ պատժաճամբարներում պահվող գերեվարված 550 հայ զինվորներից 465-ը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 36, թ. 60): Թիֆլիսի հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները Գերմանական կայսերական առաքելության ղեկավարին հասցեագրած հուշագրում հայտնում էին. «Գերի վերցված զինվորները խմբերով ուղարկվում են Բաքվի նահանգի թաթարական գյուղերը, որտեղ ծաղրուծանակի ենթարկելուց և տանջելուց հետո ոչնչացվում են» (ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 99, 99ա): Բաքու քաղաքից բացի, կոտորածները շարունակվել են նաև Ապշերոնյան թերակղզու հայաբնակ բնակավայրերում՝ Բալախանիում, Սաբունչիում, Մաշթաղում, Շաղանում, Սուրախանիում և Մարդաքյանում: Միայն Բալախանիի հիվանդանոցում սրախողխող է արվել 360 հիվանդ (տե՛ս Բագուի հայերի վիճակը, «Ժողովուրդ», Երևան, 1918, հոկտեմբերի 18, N 20): Իսկ Բաքվից ոչ հեռու գտնվող «Նորել եղբ.» բաժնետիրական ընկերությանը

պատկանող ամառանոցում կոտորածի է ենթարկվել այնտեղ ապաստանած 200-ից ավելի հայ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 170-179):

Այսպիսով՝ երեք օրվա ընթացքում հայերի նկատմամբ գործադրված շարունակական ջարդերի հետևանքով ցեղասպանության է ենթարկվել ավելի քան 30.000 հայ: Այդ թիվն են արձանագրում արխիվային վավերագրերը, փաստաթղթերի ժողովածուները (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 96-99, տե՛ս նաև Геноцид армян в Османской империи. Сборник документов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, док. N 245, с. 524) և ժամանակի մամուլը: Ստորև ներկայացնենք նաև հետևյալ վկայությունները.

Բաքվի հայերի սեպտեմբերյան կոտորածների գլխավոր կազմակերպիչներից մուսավաթական Ադրբեջանի ներքին գործերի նախարար Բեհրուդ Խան-Ջիվանշիրին ահաբեկած վրիժառու Միսաք Թորլաքյանի՝ Կ. Պոլսում 1921 թ. հոկտեմբերի սկզբներին անգլիական պատերազմական ատյանի կողմից անցկացված դատավարության ժամանակ արձանագրվել է 30.000 և 35.000 թիվը (տե՛ս Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը անգ. Զինտրական ատեանին առջեւ, Աթէնք, 1936, էջ 36): Բաքվում դեպքերի ընթացքին ուշադիր հետևող Նոր Նախիջևանի և Ռոստովի հայ համայնքի պաշտոնաթերթ «Հայ համայնքը» «Բագուի կոտորածը» վերտառությամբ հոդվածում գրում է. «Երեք օր, ամսիս 15-ին, 16-ին, 17-ին, շարունակում է կոտորածը:... Արմենիքէնդը ամբողջովին ոչնչացրած է շատ յայտնի մարդիկ սպանուած են, շատերը բանտարկուած. սպանուածների թիւը հասնում է 30.000-ի» (Բագուի կոտորածը, «Հայ համայնք», Նոր-Նախիջեան, 1918, հոկտեմբերի 21, N 24): «Приазовский край» լրագիրը 1919 թ. նոյեմբերի 24-ի համարում

ապացուցված է համարում 30.000-ը (տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов, Ер., 1992, док. N 237, с. 354).

Հյուսիսային Կովկասի պաշտպանության խորհրդի անդամ, բոլշևիկ Գ. Օրջոնիկիձեն, որ քաջատեղյակ էր Բաքվի իրադարձություններին, Վլադիկավկազից 1918 թ. հոկտեմբերի 12-ին Վ. Լենինին հղած հեռագրում կոտորածի ենթարկված հայերի թիվը նույնպես մատնանշում է 30.000 (տե՛ս Орджоникидзе Г., Статьи и речи, т. 1, Москва, 1956, с. 45). Անգամ Խորհրդային Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտի աշխատակից Ե. Տոկարժևսկին, չկարողանալով կոծկել Բաքվի հայերի մեծաքանակ կոտորածների իրողության վերաբերյալ բազմաթիվ փաստերի առկայությունը, կոտորածի ենթարկվածների ընդհանուր թիվը նշում է 30-35 հազար (տե՛ս Токаревичский Е., Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, с. 160). Ռուս ժամանակակից պատմաբաններ Մ. Վոլխովսկին ու Վ. Մուխանովը Ադրբեջանի 1918-1920 թթ. պատմությանը նվիրված աշխատությունում նույնպես նշում են 30-35 հազար (տե՛ս Волховский М., Муханов В., По следам Азербайджанской Демократической Республики, Москва, 2007, с. 92).

Ինչպես տեսնում ենք, սկզբնաղբյուրները, հայ և օտար հեղինակները միաբերան փաստում են, որ Նուրի փաշայի կողմից 1918 թ. սեպտեմբերի 15-ին Բաքուն գրավելուց հետո Ֆ. Խան-Խոյսկու գլխավորած մուսավաթական կառավարության անմիջական օժանդակությամբ երեք օրվա ընթացքում կոտորածի է ենթարկվել ավելի քան 30.000 հայ:

Վերոբերյալից հետևում է, որ Դեմոյանի մտացածին աղավաղումներով բացարձակապես խեղաթյուրվում են Բ. Իշխանյանի աշխատությունում տեղ գտած հավաստի տվյալները (ի դեպ, «Հայոց պատմության» բազմահատորյակներում տեխնիկական

վրիպումներ հետազոտող Դեմոյանը «գրախոսությունում» նշել է Բ. Իշխանյանի աշխատության 554-րդ էջը, այնինչ այդ աշխատությունը բաղկացած է ընդամենը 188 էջից):

Պատմական իրականությունը, սակայն, անհաշտ է իր նկատմամբ մտահայեցողական մոտեցման հետ: Անշուշտ, հետազոտողը, առավել ևս Հայոց ցեղասպանության հարցերով զբաղվող պատմաբանը նույն խնդրի վերաբերյալ կարող է տարբեր կարծիքներ հայտնել, բայց միայն այն դեպքում, եթե դրա համար ունի հիմքեր և հավաստի տվյալներ: Զարմանալին ու տարակուսելին այն է, որ մեր «ցեղասպանագետ» պատմաբանը ի գորու չի եղել ըստ կատեգորիաների տարբերակել կոտորածի գոհերին: Մինչդեռ նրանից պետք է ակնկալվեր՝ իր պաշտոնին հարիր խորահայաց վերլուծություն: Դեմոյանի «մեթոդաբանությամբ» ստացվում է, որ սրախողխող ու տանջամահ արված 16.805 հոգին չեն համարվում կոտորածի ենթարկվածներ: Հարկ է նշել, որ այս մոտեցումը միայն անբավարար գիտելիքներ ունենալու կամ սկզբնաղբյուրներն անուշադիր ուսումնասիրելու հետևանք չէ, քանզի Բաքվում կոտորածի ենթարկված հայերի թվաքանակի արհեստական նվազեցումը, որպես յուրովի ու անհասկանալի մեթոդաբանություն, տեղ է գտել նաև իր տնօրինության օրոք պատրաստված «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի» www.baku.am կայքում: Որքան էլ որ կայքի նախագծի նպատակն է «...ներկայացնել լուսաբանել Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվի հայ համայնքի հարուստ անցյալն ու ժառանգությունը», այդուհանդերձ, հայերի կոտորածների թվաքանակի առնչությամբ կայքի հեղինակներն առաջնորդվել են իրենց ոչ ձեռնտու թվաքանակային տվյալների շրջանցման մեթոդով:

Այսպես՝ «Բաքու. երեք ջարդերի մայրաքաղաք» բաժնում «Հայերի ջարդերը 1918 թ.» ենթագլխում, լռության մատնելով

Բաքվում կոտորածի ենթարկված հայերի ավելի քան 30.000 թվաքանակը փաստող հայ և օտար հեղինակների բազում վկայությունները՝ մեջբերվում է միայն Օսմանյան կայսրության գլխավոր շտաբի աշխատակից մայոր Մայրի 1918 թ. սեպտեմբերի 20-ին Թիֆլիս՝ գերմանացի զինվորական Կրես ֆոն Կրեսենշտայնին ուղարկած գեկուցագիրը, որում կոտորածի ենթարկված հայերի թիվը նշված է ընդամենը 10.000 (տե՛ս www.Baku.am): Կայքի նույն էջում վկայվում է Բ. Իշխանյանի հետևյալ տեղեկությունը. «...Երեք օր շարունակ ու անդադար տաճիկ ասկյարները, տեղական մուսուլման հազարավոր բանդաները և շրջակայքից թափված գյուղացիները կողոպտում, հափշտակում ու տանում էին այն բոլորը, ինչ ցանկանում էին և ինչ կարող էին տանել հայերի տներից, խանութներից, գրասենյակներից, հաստատություններից և եկեղեցիներից...», սակայն լռության է մատնված և չի մատնանշված Իշխանյանի՝ հայերի զոհերի թվաքանակի վերաբերյալ վկայակոչած արժանահավատ՝ 29.060 տվյալը: Եվ սա հայ պատմաբանի, առավել ևս Հայոց ցեղասպանության հարցերով զբաղվող հետազոտողի պատմություն շարադրելու ոճն է, որը ոչնչով չի տարբերվում թուրք կամ ադրբեջանցի պատմաշինարարների հակահայ մեթոդաբանությունից: Այլ խոսքով՝ իրականությունը խեղաթյուրելու «գիտական» այս ուղին ու դիրքորոշումը ընտրած Դեմոյանն իր վտանգավոր ըմբռնումներով, ինչպես ինքն է եզրահանգում «գրախոսականում»՝ «...*միմիայն ուրախության ու արդարացված հրճվանքի ստիժ կարող է ստեղծել Բաքվի ու Անկարայի պատմագրչակների շրջանում*» (էջ 4):

Ամփոփելով այս բաժնի վերլուծությունը՝ խմբագրակազմը հատուկ ընդգծում է, որ բազմահատորյակում տեղ գտած բազմաթիվ նորոյթների շարքում ժողովրդագրական հիմնահարցերն ունեն առանձնահատուկ գիտաքաղաքական նշանակություն: Բա-

վարավենք միայն Գ. Բաղայանի հեղինակած տեքստերի մատնանշումով, որոնք, լինելով ահռելի ծանր ու տևական աշխատանքի արդյունք, միանգամայն նոր լույսի ներքո են ներկայացնում Արևմտյան Հայաստանի XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի վարչաժողովրդագրական պատկերը (գիրք առաջին, էջ 399-405, 539-543, գիրք երկրորդ, էջ 52-64): Ցանկության դեպքում՝ այդ ամենը կնկատվեր և կարժանանար գնահատանքի:

Է) Դիտողություններ հատորում «բացակա», «չափազանց շատ գրված» և այլ նյութերի մասին:

«Գրախոսները» «համոզվել են», որ մեր կատարած աշխատանքի խոցելի կողմերից մեկն էլ այն է, որ գիտաքաղաքական կարևորություն ներկայացնող շատ նյութեր տեղ չեն գտել երրորդ հատորում: Բայց ինչպես հարցի քննությունից կհամոզվենք, իրականում նրանք ոչ թե չեն նկատել եղածը, այլ՝ չեն ցանկացել այն տեսնել:

Այսպես՝ նշվում է, որ Հայոց ցեղասպանության բաժնում *«խոսք անգամ չկա երիտթուրքերի դատավարության մասին»* (էջ 34): Այնինչ երկրորդ գրքի 526-րդ էջում և՛ խոսք կա, և՛ ծավալուն մի պարբերություն. **«Թուրքական «արդարադատությունը», իր կանխակալությամբ, բոլոր ակնհայտ թերություններով, բացթողումներով ու արհեստական սխալներով հանդերձ, ունի չափազանց կարևոր նշանակություն Հայոց ցեղասպանության իրավական գնահատման տեսակետից, քանզի մեղավոր էին ճանաչվում ու մահվան էին դատապարտվում թուրքական իշխանության բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում նաև հայերի զանգվածային սպանությունների համար: Կարելի է եզրակացնել, որ նման մեղադրանքի հաստատումը թուրքական դա-**

տաքանում նշանակում էր նոր Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության անուղղակի ճանաչում: Թերևս սա էր նաև պատճառը, որ հետագայում քեմալականները փորձեցին չեզոքացնել ռազմական տրիբունալների վճիռները»: Վերոհիշյալից հետևում է, որ «գրախոսները» իրականում խոցելի նյութ են փնտրել, այլապես, իմանալով, որ երիտթուրքերի դատավարությունն սկսվել է 1919 թ., այն կփնտրեին ոչ թե այս հատորում, այլ 1918-1945 թթ. ընդգրկող չորրորդ հատորի առաջին գրքի՝ «Հայկական Նեմեսիսը գործողության մեջ» ենթագլխում (էջ 231-236):

«Գրախոսները» դժգոհ են, որ հատորում ներկայացված չեն հայ կանանց ու երեխաների նկատմամբ կատարված ոճրագործությունները: Այս դեպքում էլ մենք պետք է դժգոհենք նրանց տեսողության որակից, քանի որ այդ մասին 485-487-րդ էջերում ներկայացված են վերը նշված դեպքերը: Հավանաբար «գրախոսներին» հետաքրքրում էին սպանությունների, բռնաբարությունների և խեղումների մանրամասները, որոնց նրանք կարող էին ծանոթանալ վկայակոչված ծավալուն գրականության մեջ:

Հատորյակը կարդալիս հավանաբար ունեցած հերթական «ցնցումների» պատճառով «գրախոսները» տարօրինակ ձևով «*թռուցիկ մի հիշատակություն*» են համարել երկրորդ գրքում տեղ գտած Կրես ֆոն Կրեսենշտայնի բավական ընդարձակ վկայությունը՝ իշխանությունների կողմից հավաքագրված և մի որբանոցում հավաքված 500 հայ որբ երեխաների ողբերգական վիճակի մասին (էջ 487-488) և եկել չհիմնավորված հետևյալ եզրակացությանը. «*գրեթե խոսք չկա թուրքական որբանոցների մասին*» (էջ 9):

«Գրախոսները» տեսողական խնդիրներ ունեն նաև մեր պատմության մեջ Հայաստանյայց առաքելական եկեղեցու ծանրակշիռ տեղի ու դերի մասին հատորներում առկա հսկայական նյութը գտնելու հարցում (գրխ., էջ 12): Ազնիվ լինելու դեպքում,

կարդալով միայն Հայ եկեղեցու գործունեությունը լուսաբանող ամբողջական բաժինների վերնագրերը «1677 թ. Էջմիածնի ժողովը: Հակոբ Ջուղայեցի» (հ. III, գիրք I, էջ 13), «Հայաստանյայց առաքելական եկեղեցու 1836 թ. Կանոնադրությունը» (էջ 268), «1903 թ. հունիսի 12-ի օրենքը Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման մասին», (գիրք II, էջ 12), լուրջ պատմաբանը կիրառարվեր նման անհեթեթ մեղադրանք ներկայացնելուց: Բայց եթե անպայման «նյութ» սարքելու բուռն ցանկության պայմաններում վերոհիշյալը ևս բավարար չի նկատվի՝ մեզ ներկայացված մեղադրանքը օրակարգից հանելու համար, ապա խորհուրդ կտայինք հարյուրավոր էջերում խնդրո առարկա դրվագները գտնելու նպատակով զուր ժամանակ չվատնել և միայն թերթել հայ ազատագրական պայքարի կազմակերպման, մշակույթի ու կրթության զարգացման գործում մեծ դեր ունեցած հայոց կաթողիկոսների, պատրիարքների, թեմակալ առաջնորդների ու հոգևոր դասի այլ ներկայացուցիչների անձնատունների հարուստ ցանկերը և համապատասխան էջերում ծանոթանալ նրանց գործունեությունը լուսաբանող էջերին: Գուցեն դրանից հետո Դեմոյանն ու իր ծպտյալ թիմակիցները որոշեին իրենց մեղքը քավել եթե ոչ մեր, ապա գոնե եկեղեցու առջև՝ նախընտրելով ապաշխարությունը:

Ի դեպ, եկեղեցուն «զանց առնելու» համար «գրախոսների» քննադատությունը շաղկապված է այլ հարցի հետ. *«ինչպես կարելի է Հայաստանում սոցիալ-դեմոկրատական ու մարքսիստական գաղափարների տարածմանը հասուկացնել առանձին ենթազուլիս և չորս էջ, իսկ հայ եկեղեցու պատմությունը, հաստատության ներսում գաղափարախոսական ու կրոնական բովանդակային վերլուծություններն ուղղակի զանց առնել»:* Պնդում ենք, որ մարքսիստական ու սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարած-

մանն առանձին ենթագլուխ հատկացնելը միանգամայն արդարացված է: Ավելին՝ այդ ենթաբաժնի հեղինակ ակադեմիկոս Հր. Սիմոնյանը, հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանում հայ իրականության մեջ սոցիալիստական գաղափարների տարածման լայն աշխարհագրությունը, իրավացիորեն գտնում էր, որ եղած նյութի ծավալը սեղմ է, ուստի կարելի էր այն ավելի ընդարձակել:

«Կուրության» հերթական մի օրինակ ևս բացահայտելու նպատակով ստիպված ենք կրկին վկայակոչել երկարաշունչ նախադասություններ: «Գրախոսները» գրում են. *«Խոսելով Առաջին աշխարհամարտում հայերի մասնակցության մասին՝ մի ամբողջ ենթագլուխ է նվիրված ռուսական բանակին ցուցաբերված հայերի օժանդակությանը, ներկայացված է կամավորական ջոկատների ստեղծումը, սակայն չկա համարժեք տեղեկատվություն օսմանյան բանակում հայերի ներկայացվածության մասին: Սա ստեղծում է հայերի «դավաճանության» վտանգավոր պատկեր և հաստատում թուրքական ու օտարազգի ժխտողական պատմաբանների նմանօրինակ պնդումները: Այնինչ հայերը՝ որպես Օսմանյան կայսրության քաղաքացիներ, ներգրավվեցին զինվորական ծառայության մեջ և խիզախություն դրսևորեցին պատերազմի սկզբնական շրջանում: Կապիտան Սարգիս Թորոսյանի հանրահայտ օրինակը, որի մասին վերջին տարիներին բազմաթիվ հիշատակումներ եղան հայկական ու թուրքական աղբյուրներում, չգիտես ինչու վրիպել է հեղինակների աչքից» (էջ 32):*

Ի գիտություն մեր «գրախոսների»՝ առանց պահանջվող դրվագների նկարագրության էլ, պատմության կեղծարարները հայերիս մեղադրելու էին և կշարունակեն մեղադրել «դավաճանության» մեջ՝ իրենց իրականացրած ոճրագործությունն արդարացնելու համար: Բայց մենք, ինչպես մեր «գրախոսներին», այն-

պէս էլ օտար կեղծարաններին՝ մեզ մեղադրանքներ ներկայացնելու հնարավորությունից զրկելու նպատակով, շտապենք «արդարանալ»: 481-րդ էջում կա մի ամբողջական պարբերություն. **«Զորահավաքի ընթացքում օսմանյան բանակ է գորակոչվում 18-45 տարեկան ավելի քան 60 հազար հայ: Տարբեր ռազմաճակատներում նրանք մասնակցում են մարտական գործողությունների: Հայ զինվորներն արժանանում են թուրքական հրամանատարության դրվատանքին և նույնիսկ շնորհակալական հեռագիր է հղվում Վանի վալի Զևեթթ բեյին՝ նահանգից գորակոչված հայերի սխրագործությունների համար»:** Մեկնաբանությունները թողնում ենք ընթերցողին:

Մեթոդաբան, ցեղասպանագետ, դատավոր, ազատամիտ ներկայացող մեր ընդդիմախոսները, պարզվում է, նաև կնամեծար են (այդպէս ենք նրանց կոչում, որ չվիրավորվեն), մարզասեր ու «ինտելիգենտ»: Նրանք անթույլատրելի են համարում, որ հեղինակները *«Աշխատանքում չեն անդրադարձել այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսիք են, օրինակ, հայ կանանց շրջանում ձևավորված ֆեմինիստական շարժումը...: Լիովին զանց է առնվել հայկական մարզական ու մարմնակրթական շարժման հույժ կարևոր երևույթի ներկայացումը»* (էջ 5-6): Նույն միտքը հանդիպում ենք նաև «գրախոսության» «Ամփոփիչ եզրահանգումներում», որտեղ մեզ հասցեագրված մեղադրանքներն ավելի տպավորիչ են դառնում՝ օգտագործված օտար եզրույթի շնորհիվ. *«Հատորներում առանձին բաժին չի հասկացվել հայ կնոջը, կանանց շարժմանը, քանի որ հեղինակները տուրք են տվել պատմությունը ներկայացնելու ավանդական մասկուլին, այն է՝ տղամարդակենտրոն ավանդական մոտեցմանը»:* Այս անգամ չարժե վերոհիշյալը գիտականորեն մեկնաբանել, առավել ևս՝ վիճարկել, քանի որ մեր հաս-

ցեին վերջապես հնչել է հաճոյախոսություն՝ մենք հանդես ենք բերել «տղամարդակենտրոն» ավանդական մոտեցում:

Տեղին է միայն հիշեցնել «նրբագգաց» քննադատներին, որ հայ իրականության մեջ ֆեմինիստական որևէ լուրջ շարժում չի եղել: Դրա թույլ արձագանքն առկա է միայն արևմտահայ հատուկենտ կին գրողների ստեղծագործություններում (Սրբուհի Տյուսաբ, Հայկանուշ Մառք): Ի դեպ, այս կապակցությամբ խորհուրդ կտայինք ընթերցել վերջերս պրոֆ. է. Մինասյանի լույս ընծայած «Հայ հերոսուհի կանայք» արժեքավոր մենագրությունը, որը, ի հեճուկս մեր ընդդիմախոսների, հեղինակի դիտարկմամբ իսկ՝ նույնպես գրված է տղամարդակենտրոն դիրքերից:

«Գրախոսականի» կազմողները, «չնկատելով» երկրորդ գրքի 35-38 էջերում պրոֆ. Վ. Մելիքյանի հեղինակած ընդարձակ շարադրանքը, մերկապարանոց հայտարարում են, թե *«քննական վերլուծության չի ենթարկվում Անդրանիկի ու Նժդեհի գլխավորած հայկական ջոկատների մասնակցությունը Բալկանյան պատերազմներին»*:

«Գրախոսության» 25-րդ էջում կա հանդիմանություն, որ *«1877-1878 թթ. ոռու-թուրքական պատերազմը»* գլխում *«Չի խոսվում հայերի մասնակցության մասին, որը զգալի է»*: Համաձայն ենք միայն վերջին մտքի հետ, որ պատերազմում հայերի մասնակցությունը մեծ էր: Ուստի առաջին գրքում (էջ 421-429) առանձին ենթավերնագրով (**«Հայերը 1877-1878 թթ. ոռու-թուրքական պատերազմում»**) կա անդրադարձ այդ խնդրին: Հավելենք նաև, որ *«1877-1878 թթ. ոռու-թուրքական պատերազմը»* վերնագրով գլուխ չկա, ինչպես նշում են «ուշիմ» ընդդիմախոսները:

Իր բողոքագրի մեջ խմբագիրը նկատել է, որ հեղինակները շրջանցել են մի «կարևոր» փաստ: Նրա կարծիքով՝ *«Տարօրինակ է, հատորի ոչ մի գրքում չի հիշատակվում Ռուսական կայսրության»*

արտգործնախարար Լոբանով-Ռոստովսկու «Հայաստանը մեզ պետք է առանց հայերի» հայտնի արտահայտությունը, այնինչ խորհրդային շրջանում լույս տեսած բազմահատորյակում այս մեջբերումը կա» (հատ. VI, էջ 284) (էջ 21):

Նախ՝ թույլ տվեք հարցնել, այդ որտեղ է գրված, որ տվյալ մեջբերումը պարտադիր է ակադեմիական կամ ոչ ակադեմիական որևէ հրատարակության համար: Եվ հետո՝ այդ որ աղբյուրով է հաստատվում, որ Լոբանով-Ռոստովսկին նման բան է ասել: Եթե «Դեմոյանը և ընկ.» այդ ժամանակաշրջանի պատմությունը սովորած լինեին, նման պնդում չէին անի: Ռուսաստանի արտգործնախարարն այդքան միամիտ մարդ չէր, որ նման ծրագիր ունենալու պարագայում իսկ, բարձրաձայն խոսեր այդ մասին կամ այդ միտքը փաստող գրավոր աղբյուր թողներ: Փորձառու պատմաբանը կնկատեր, որ վերոհիշյալ մեջբերմանը 6-րդ հատորում հղում չի տրված, քանի որ այն գոյություն չունի և բուշնիկների կողմից հետագայում է հորինվել՝ ցարիզմի գաղութային քաղաքականությունն ընդգծելու նպատակով, ապա գրքից գիրք է անցել՝ պարոնայք քննադատների հանգույն «մտավորականների» գայթակղելու համար: Հավելենք, որ տարիներ առաջ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը այս թեմայով կազմակերպել էր հատուկ քննարկումներ, որոնց ընթացքում մասնագետները համոզվել էին, որ վերոհիշյալ արտահայտությունը սարքովի է, ուստիև այն գիտական շրջանառության մեջ պահելու հիմքեր չկան:

Իրավացի չէ Դեմոյանը, երբ անգրագետ շարադրանքով պնդում է, թե «*Երրորդ հատորում խոսվում է Արևմտյան Հայաստանում և հայաբնակ այլ քաղաքներում լույս տեսած միայն հայաստառ թուրքերեն մամուլի մասին, ...սակայն շուրջ **հիսուն հայալեզու մամուլի** և ոչ մի անուն չի հիշատակվում»* (էջ 28, ընդգծումը մերն է): Նախ՝ «*հիսուն հայալեզու մամուլ*» չի կարող լինել, այդ-

պիսի հայերեն չկա: Պետք է լիներ՝ **հայալեզու հիսուն թերթեր և ամսագրեր**: Այնուհետև, հատորի՝ հայ մամուլին նվիրված չորս ենթաբաժիններում հայաբնակ քաղաքներում լույս տեսած հայերեն հրատարակությունները տասնյակ էջեր են զբաղեցրել, իսկ հայատառ թուրքերեն մամուլին հատկացված է ընդամենը մեկ էջից փոքր-ինչ ավելի ծավալ (տե՛ս երկրորդ գրքի 274-275-րդ էջերը): Արևմտյան Հայաստանում լույս տեսած մամուլը հանգամանորեն չի լուսաբանված հետևյալ պատճառներով. նախ՝ այդ պարբերականները, բացառությամբ մի քանիսի, ոչ անցյալում, ոչ էլ մեր օրերում չեն ուսումնասիրվել: Դրանցից հատորում անդրադարձ կա XIX դ. երկրորդ կեսին Վանում հրատարակվածներին և 1908 թ. հետո լույս տեսած պարբերականներին (էջ 266-267 և 286): Դրանք չեն ուսումնասիրվել, քանի որ բնաշխարհում լույս տեսած պարբերականներից շատ քիչ միավորներ են պահպանվել, մի հանգամանք, որ պետք է հայտնի լիներ գոնե ցեղասպանության հիմնախնդիրներով զբաղվող բարձրագույն քննադատին:

«1884 թ. իբրև բերդ հիմնված Ալեքսանդրապոլը սկսեց կառուցապատվել 1837 թ. կազմված գլխավոր հատակագծով» (գիրք երկրորդ, էջ 213) ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանի հեղինակած ձևակերպման մեջ, ոչ թե *«թվականների տեղերը ճիշտ չեն տեղադրվել»*, ինչպես պնդում են «գրախոսները», այլ թույլ է տրվել մասնակի վրիպում. իրոք 1837 թ. քաղաքի կարգավիճակ ստացած Ալեքսանդրապոլը կառուցապատվել է նույն տարում հաստատված հատակագծով: Այսինքն՝ նախադասության սկզբում 1884 թ. տեխնիկական վրիպում է, ուստի՝ ավելորդ:

Հիմա այն մասին, թե ինչու որոշ բաժիններ շատ են գրված, և դրանով իբր խախտված է թեմաների ծավալային համամասնությունը:

Անընդունելի է 31-րդ էջում արված այն պնդումը, թե ֆիդայական կոիվների մեծ մասը *«տեղային նշանակություն է ունեցել և ոչ մի ազդեցություն չի թողել կարևոր իրադարձությունների վրա»*, ուստի դրա փոխարեն անհրաժեշտ էր անդրադառնալ *«1912 թ. հայ գրերի գյուտի և տպագրության համահայկական հոբելյաններին»*, որի մասին, իբր *«որևէ հիշատակում չկա»* (էջ 29): Կարճ պատասխանենք՝ **ֆիդայական շարժումը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության կարևորագույն էջերից է և ունի բացառիկ նշանակություն սերունդներին հայերնասիրական ոգով դաստիարակելու գործում**, ուստի պետք է ներկայացվեր հանգամանորեն: Հայ գրերի գյուտի մասին, այնուամենայնիվ, ակադեմիկոս Ս. Մարինյանի հեղինակած տեքստում հիշատակություն կա (տե՛ս գիրք երկրորդ, էջ 206):

«Գրախոսության» մեջ կարդում ենք. *«Անհասկանալի տրամաբանությամբ ռուսական գորքերի կողմից Ախալցխայի և Ախալքալակի (վերջին տեղանվան ընդգծումը մերն է) գրավման դրվագների մանրամասն նկարագրություններին ավելի շատ էջեր են տրամադրվել, քան, սաենք, Երևանի բերդի գրավման նկարագրությանը: Դրա սկունքները հասկանալի են: Ուշադիր ընթերցումից պարզորոշ է դառնում, որ հատորի պատասխանատու խմբագիրը՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանը, յուրովի է փորձել տնօրինել ակադեմիական բազմահատորյակի բախտն ու բովանդակությունը՝ իր դոկտորական աստենախոսության բազմաթիվ հատվածներ մեխանիկորեն տեղափոխելով այս հատոր»* (էջ 22):

Նախ՝ զարմանալի է, որ վերոհիշյալ քաղվածքում Զավախքի կենտրոն Ախալքալաքի անունը գրված է *«Ախալքալակ»* ձևով: 2013 թ. Ա. Մելքոնյանի աստենախոսությունը խոշորացուցով «ուսումնասիրելուց» և անոնիմկա գրելուց հետո մեզ թվում էր, որ

Դեմոյանը գոնե յուրացրել է Ջավախքի տեղանվանաբանությունը, հեղինակից սովորել «Ախալքալաք» բառի ճիշտ գրությունը և իմաստային բացատրությունը. այն է՝ վերջինիս «քալաք» բաղադրիչը նույնանուն է հայերենի «քաղաք» բառի հետ: Բայց...

Ինչո՞ւ է պատասխանատու խմբագիրը *«յուրովի ... տնօրինել ակադեմիական բազմահատորյակի բախտն ու բովանդակությունը»* և փաստորեն «ձեռնոց նետելով» անգամ Երևանին, նախապատվությունը տվել իր ծննդավայր Ջավախքի պատմությանը: Բացահայտ հեգնական ոճով ու չարամտությամբ գրված այդ ձևակերպմանը ևս անդրադառնանք. Դեմոյանը զանց է առնում պատմականության սկզբունքը՝ չկամենալով ընդունել, որ XIX դ. սկզբին հայաբնակ Ախալցխայի էյալեթը Օսմանյան կայսրության ընդարձակ և ռազմավարական նշանակություն ունեցող նահանգներից էր, և ռուս-թուրքական պատերազմում առավելության հասնելու համար կողմերից յուրաքանչյուրը փորձում էր այնտեղ ապահովել գերակայություն: Պատահական չէ, որ 1828 թ. տիրելով այդ նահանգին՝ հաջորդ տարում առանց լուրջ կռիվների ռուսները տեր դարձան Արևմտյան Հայաստանի զգալի մասին և նրա կենտրոն Կարին քաղաքին: Առանց այդ դեպքերի ներկայացման, որոնք, ինչպես երևում է հատորի տեքստից, վերաբերում են ոչ միայն Ջավախքին, այլև ամբողջ նահանգին ու տարածաշրջանին, հասկանալի չէր լինի հետագա շարադրանքը: Մի՞թե Դեմոյանն անտեղյակ է, որ նախորդ ակադեմիական հրատարակության հինգերորդ հատորում խորհրդային տարիներին գոյություն ունեցող քաղաքական կապանքների պատճառով այս հարցերը գրեթե չեն լուսաբանել: Դա նրան չի հետաքրքրում, քանի որ Ա. Մելքոնյանին սևացնելու սևեռուն նպատակը արդարացնում է միջոցները: Վայել չէ հայ մարդուն նման անձնական դրդապատճառով մեր հայաշխարհի մի կտոր Ջավախքը միտումնավոր հա-

կադրել քաղաքամայր Երևանին և հատորը համարել «*ջավահարս-կենտրոն մի պատմության շարադրանք*» (էջ 46): Նման արարքով, իրականում, Դեմոյանը ոչ թե մատնացույց է արել իր «Երևանա-կենտրոն» կեցվածքը, այլ հերթական անգամ բացահայտել է սե-փական ապագգային ու եսակենտրոն նկարագիրը:

Հիմնագուրկ է քննադատությունը երկրորդ գրքում տե-ղադրված քարտեզների (զավեշտալի է, որ «գրախոսականում» դրանք որպես «*քարտեզագրական նյութ*» են ներկայանում) վերա-բերյալ: Մեր «դատավորները», իրենց վրա վերցնելով մասնագի-տական մեծ պատասխանատվություն, մատնանշում են դրանց «*խառնիճադանջությունը*», «*հերթական փնթի աշխատատեղ*»⁴, ինչ-պես նաև՝ «*պատմական քարտեզների անհարկի ձևափոխումնե-րը*»: Մերկապարանոց հայտարարությունները թողնելով իրենց խղճին՝ նշենք, որ սովորաբար նման պարագայում անհրաժեշտ էր գոնե մի քանի օրինակ մատնանշել, ինչը չի արվել: Ավելին, «քննադատները» ընթերցողին ապակողմորոշում են, երբ պնդում են, թե իբր այս բոլոր «հանցանքները» գործել են Գեղամ Բաղայանը և Մարտին Մարտիրոսյանը: Բարեխիղճ մարդը կնկատեր, որ երրորդ հատորում զետեղված քարտեզներն ունեն երկու հեղինակ՝ Բաբկեն Հարությունյան և Գեղամ Բաղայան (այդ մասին նշված է գրքի վերջում՝ 757-րդ էջում): Ուստի զարմա-նալի չէ, որ կան ոճական որոշ տարբերություններ: Կարևորը քարտեզի բովանդակությունն է և դրանում պատմական նյութի պատշաճ մատուցումը: Ինչ վերաբերում է քարտեզագրական ձևավորմանը, ապա դրանք կատարված են հավուր պատշաճի և բարձր արհեստավարժությամբ:

⁴ *Աշխատատեղ* բառ հայերենում չկա, կա աշխատելատեղ (Էլոյան Սեդա, Արդի հայերե-նի նորաբանությունների բառարան, Եր., 2002, էջ 43):

Անբարեխղճության ևս մեկ օրինակ. «գործ սարքողները», իրենց մեղադրանքները հիմնավորելու համար «վնթի» քարտեզներից «գրախոսության» մեջ զետեղել են մի օրինակ՝ «Հայկական հարցը (1878-1914 թթ.)» վերտառությամբ: Վերջինիս հեղինակը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանն է, ում պարոն Դեմոյանը համարում է իր ուսուցիչը: Առնվազն պարկեշտ չէ անհարկի քննադատել՝ ում պատահի, առավել ևս՝ ուսուցչին:

«Գրախոսության» 15-րդ էջում «հերքվել է» պրոֆեսորներ Պ. Հովհաննիսյանի և Ն. Սարուխանյանի հեղինակած այն միտքը, որ Անիի «**Պեղումների ընթացքում երևան հանվեց Բագրատունյաց Գագիկ I թագավորի ամբողջական արձանը, ինչպես նաև Զվարթնոցին նման Գագկաշեն եկեղեցին իր հատակագծով**» (էջ 177), քանի որ, ըստ ընդդիմախոսների՝ «*Այստեղ ճիշտ տարբերակը ոչ թե հաստակագծով, այլ մանրակերտով*» (ոճական առումով աղճատված սույն նախադասությունը մեջբերել ենք նույնությամբ): Իրոք՝ Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ (Գագկաշեն) եկեղեցու պեղումների ժամանակ հայտնաբերվել է Գագիկ թագավորի 2.25 մետրանոց արձանը՝ ձեռքին եկեղեցու մանրակերտի ստորին հատվածի բեկորներով: Բայց ինչու են գրախոսները պնդում, որ վերոհիշյալ նախադասության երկրորդ մասում սխալ կա, քանի որ իբր խոսքը հենց մանրակերտի հայտնաբերման մասին է: Հեղինակները նկատի ունեն բուն եկեղեցու հայտնաբերումը: Այսպես՝ Ս. Մնացականյանի «Զվարթնոց և նույնատիպ հուշարձանները» գրքի 200-րդ էջում կարդում ենք. «Բուն տաճարը հայտնաբերվեց 1905-1906 թվականների պեղումների ժամանակ (մանրամասն տե՛ս նաև Н. Мара, Ани, Москва, 1934, с. 55-60, տե՛ս նաև՝ ՀՍՀ, հ. 3, էջ 216):

ը) Ցեղասպանության խնդրին վերաբերող դիտողություններ:

Ինչպես և սպասելի էր, «գրախոսների» համար գլխավոր թիրախը լինելու էր երկրորդ գրքում տեղ գտած Հայոց ցեղասպանության պատմության շարադրանքը: Դա ոչ միայն այն պատճառով, որ «գրախոսները», լինելով հանրապետության «ճանաչված» ցեղասպանագետներ, մասնագիտական ու համոզիչ կարծիք կհայտնեին այդ բաժնի «անորակության» վերաբերյալ, այլ նաև՝ օգտագործելով թեմայի նկատմամբ մեր ժողովրդի ունեցած՝ հասկանալի զգացական ու առանձնահատուկ վերաբերմունքը, հնարավորություն կունենային հեղինակներին ներկայացնել ամեն տեսակ, այդ թվում՝ քաղաքական մեղադրանքներ: Դիմենք փաստերին:

«Գրախոսության» կազմողները «ցնցվել են» (էջ 34) Հայոց ցեղասպանության համաշխարհային արձագանքների և իրավաքաղաքական գնահատականի բաժնի ամփոփիչ մտքից, ըստ որի խաղաղ քաղաքացիական բնակչության զանգվածային կոտորածները միջազգային իրավունքի տեսակետից համարվել են այդ սկզբունքներին հակասող հակաիրավական արարք դեռ XIX դարի կեսերից, ինչն է՛լ ավելի հստակեցվել է 1890-ական թթ. ու ձևակերպում ստացել Առաջին աշխարհամարտը եզրափակող փաստաթղթերում, և ի վերջո, ՄԱԿ-ի՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիայով» (էջ 523-528):

Բազմահատորյակի հեղինակները քննադատվում են ցեղասպանագիտական միջազգային հանդեսներից մեջբերումներ չկատարելու (էջ 19), Պոնտոսի հույների նկատմամբ երիտթուրքական իշխանությունների քաղաքականությանը (էջ 10), Օսմանյան կայս-

րությունում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուին (էջ 19), կամ «գե-նցիդ» եզրույթը շրջանառող Ռաֆայել Լեմկինին (էջ 12) պատշաճ ուշադրություն չդարձնելու մեջ: Տպավորություն է ստեղծվում, որ նյութի կազմողները մոռանում են, որ խոսքը ոչ թե զուտ ցեղասպանագիտական բնույթի աշխատության կամ բացառապես Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանությանը նվիրված հատորյակների, այլ «Հայոց պատմության» բազմահատորյակի երրորդ հատորի՝ մոտ 300-ամյա հարուստ պատմության մասին է:

Հույների և ասորիների ցեղասպանության լուսաբանումը հեղինակների առաջնահերթ խնդիրը չի եղել: Այդուհանդերձ, ինչպես ասորիների ու հույների, այնպես էլ եզդիների (տե՛ս նաև՝ էջ 493) ողբերգությունները ներկայացվել են, բայց Հայոց ցեղասպանության ընդհանուր խորապատկերի վրա՝ ազգային փոքրամասնությունների նկատմամբ ևս օսմանյան պետության ցեղասպան քաղաքականությունը բացահայտելու նպատակով: Հատորյակում կան հղված աշխատություններ, որոնք հիմնախնդրով հետաքրքրվողներին կարող են ավելի հանգամանորեն լուսաբանել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ասորիների և հույների նկատմամբ իրականացված ոճրագործությունների մանրամասները:

«Խոցելի» և «բացակա» մյուս նյութի մասին. երկրորդ գրքի Հայոց ցեղասպանության միջազգային արձագանքների բաժնում առկա է Հ. Մորգենթաուի հայանպաստ գործունեության գնահատականը և որպես Հայոց ցեղասպանության պատմության կարևոր սկզբնաղբյուր արժևորված է նրա թողած հուշագրությունը (էջ 514): Անհիմն պնդվում է, թե իբր 514-րդ էջում *«Մորգենթաուի հուշագրության առաջին հրատարակության տարեթիվը սխալ նշված է 1919 թ.»*, մինչդեռ տվյալ էջում գրված է՝ **«առավել արժեքավոր է 1919 թ. լույս տեսած «Դեսպան Մորգենթաուի հուշերը»**

աշխատությունը» (էջ 514): Իսկ 1918 թ. առաջին անգամ հրատարակված Մորգենթաուի հուշագրությունից (Morgenthau H., Ambassador Morgenthau's Story, N. Y., 1918) հղումներ կան 482, 485, 490-րդ էջերում:

Ռ. Լենինին չհիշատակելու մասին. թեև հիմնականում նրա կողմից կազմված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան ՄԱԿ-ի կողմից ընդունվել է բավական ուշ՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին, այսինքն՝ քննարկվող ժամանակաշրջանից դուրս պատմափուլում, այնուամենայնիվ, ի գոհացումս մեր ընդդիմախոսների՝ դրա դրույթները հիշատակվել են նաև այս գրքի 492, 528-րդ էջերում:

«Գրախոսության» մեջ քիչ չեն հակասական ու իրարամերժ դատողությունները: Հատորի հեղինակները մեղադրվում են՝ Գերմանիայի մեղսակցության հարցին պատշաճ ուշադրություն չդարձնելու մեջ (էջ 9): Այդ հարցում բավարար չի նկատվում Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանատան գլխավոր թարգման Ա. Մանդելշտամի կարծիքի վկայակոչումը. նա **«հանցավոր էր համարում նաև կայսերական Գերմանիային, որը թեև չկազմակերպեց ջարդերը, բայց քաջալերեց և արդարացրեց դրանք»** (էջ 517):

Հատկանշական է, որ մոռանալով առաջադրած մեղադրանքը՝ անմիջապես հաջորդ էջում «գրախոսները» ականա ընդունում են, որ այդ հարցին է նվիրված նաև գերմանացի սոցիալիստ Կարլ Լիբկնեխտի՝ 1916 թ. Ռայխստագի նիստում ունեցած ելույթը, որում գերմանացի պատգամավորը հայկական կոտորածների կազմակերպման համար պատասխանատու է համարում նաև սեփական կառավարությանը, որը երիտթուրքերին ուղղորդում էր Կոստանդնուպոլսում գտնվող իր սպաների միջոցով (էջ 518-519): Մի՞թե Լիբկնեխտի կողմից սեփական կառավարության հասցեին

երկրի օրենսդիր մարմնում հնչեցված այդ մեղադրանքները Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի մեղասկցությունը փաստող հստակ վկայություններից չեն:

Ռուսաստանի քաղաքականության գնահատականի կապակցությամբ էլ հիշեցնենք, որ այդ մասին խոսվում է «Օսմանյան կայսրության մասնատման մեծ տերությունների ծրագրերը 1914-1917 թթ.» բաժնում (էջ 529-536): Այնտեղ ներկայացված են Անտանտի տերությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ծավալապաշտական ծրագրերը, երբ համաշխարհային պատերազմի ու հայերի ցեղասպանության իրականացման ընթացքում նրանց միջև կնքվում էին Օսմանյան կայսրության և մասնավորապես Արևմտյան Հայաստանի տարածքների բաժանման վերաբերյալ Սայքս-Պիկո-Սազունով գաղտնի համաձայնագրերը:

Զարմանալի չէ, որ մեր ընդդիմախոսները, կոնտեքստից արհեստականորեն կտրել-հանելով առանձին նախադասությունը (էջ 10), «դժվարացել են» ըմբռնել էջ 493-ում տեղ գտած միտքը: Եթե մեջբերվեր ամբողջ պարբերությունը, ապա միանգամայն պարզ կդառնար, որ հայ, ասորի և հույն ժողովուրդների բնաջնջումը Բ. Դռան դիտանկյունից ընդհանուր այլատյաց, ցեղասպան քաղաքականություն էր: Բայց դրա գոհը դարձած ժողովուրդների դիտանկյունից այն, բնականաբար, ընկալվում է իրենց նկատմամբ իրագործված՝ առանձին, փոխկապակցված հանցագործություններ:

Սուբյեկտիվ մղումներով չառաջնորդվելու դեպքում «գրախոսները» պետք է ըմբռնեին, որ հատորյակում հատուկ ընդգծվել է օսմանյան պետության ցեղասպան բնույթը: Թեպետ հայերն էին ընտրվել հիմնական թիրախ, բայց երիտթուրքերի ցեղասպան ծրագիրը ներառել էր նաև ոչ թուրք ժողովուրդներին:

Հ. Դեմոյանը «խիստ վիճելի, «բացարձակապես անընդունելի, հակազիտական պնդում» է համարում երկրորդ գրքում տեղ գտած հետևյալ միտքը. «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը ունեցավ նաև հոգեկան խեղումներ...» (էջ 492): Ինչպես մեջբերման բազմակետերից հետևում է՝ քաղվածքն ամբողջական չէ և կտրված է կոնտեքստից: Դա միտումնավոր է արվել՝ հետևյալ մեղադրանքը ներկայացնելու համար. «Անհասկանալի է, թե ինչպես կարող է որևէ ժողովուրդ՝ որպես ամբողջություն, դասնալ «հոգեկան խեղումների» կրող, ո՞ր մարմինը կամ անհատն է լիազորված մի ողջ ժողովրդի տալու «հոգեկան խեղում» ախտորոշումը» (գրի., էջ 14):

Մեջբերված տեքստի կիսատ թողնված հատվածը շարունակելով և վկայակոչելով հաջորդ էջի միտքը՝ («...**ձեռք բերեց բազմաթիվ բարդույթներ, որոնք ուղղակի և անուղղակի կերպով ազդել ու շարունակում են ազդել ոչ միայն Եղեռնը անմիջականորեն վերապրածների, այլ նաև հաջորդ սերունդների վրա**», «**Հայերի ցեղասպանությունն անմիջական և հեռակա հետևանքներ է ունեցել հայ ժողովրդի կենսագործունեության, հոգեկան կերպարի և ազգային բնավորության, նրա հետագա ազգային ձգտումների և նպատակների վրա**», էջ 492-493), համոզվում ենք, որ հարցին տրվել է սպառիչ պատասխան: Պատահական չէ, որ սույն դրույթները տեղ են գտել ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայում: Ուստի տեքստի հեղինակ Ա. Մարտիանը 492-րդ էջում վկայակոչել է հենց այդ փաստաթղթում ամրագրված հետևյալ դրույթը. «**ցեղասպան հանցավոր գործողություններ են՝ զանգվածային սպանությունները, ծանր մարմնական վնասվածքները, հոգեկան խեղումներ պատճառելը...**»: Ըստ «գրախոսի» ստացվում է, որ հայ ժողովրդին պատուհասա-

ծը չի տեղավորվում վերոհիշյալի մեջ, և կոնվենցիան կապ չունի Մեծ եղեռնի հետ:

«Գրախոսները» ոչ միայն 1918 թ. սեպտեմբերին Բաքվում կոտորված հայերի թվաքանակի՝ 30 հազարի իրողությունն են կասկածի տակ առել, այլ նաև համարել են *«իրականությունը չհամապատասխանող»* մեր հետևյալ պնդումը 1915 թ. ապրիլի 24-ին և հաջորդ մի քանի օրերին ձերբակալվածների թվաքանակի վերաբերյալ. **«Վաղօրոք կազմված ցուցակների համաձայն՝ ոստիկանությունը կալանում է 800-ից ավելի, իսկ այլ աղբյուրի համաձայն՝ 2800 հայերի»** (գիրք երկրորդ, էջ 483): Այդ կապակցությամբ «խմբագիրն» ու «գրախոսները» շտապել են սրբագրել մեր «կոպիտ սխալը» իրենց նյութի 13-րդ էջում տեղ գտած հետևյալ նախադասությամբ՝ *«2800-ը իրականությունը չհամապատասխանող թիվ է, և մեկ աղբյուրի վրա հիմնվելով՝ այն նշելը սուկ հայ ձերբակալվածների թվաքանակը արհեստականորեն ուռճացնելու նպատակով, անընդունելի է և ոչ հարիր սկադեմիական հրատարակությանը: Բացի այդ, 2800 թիվը վերցվել է Արթուր Պեյլերյանի կազմած ֆրանսիական դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի 26-րդ փաստաթղթից, որտեղ, սակայն, նշվում է, որ ձերբակալված 2800 հայերի մեջ կան բազմաթիվ մտավորականներ: Այսինքն՝ տարօրինակ ձևակերպումներով պատրանք է ստեղծվում, թե բոլոր 2800 ձերբակալված հայերը մտավորական են»:*

Այստեղ ոչ մի *«տարօրինակ ձևակերպում»* չկա: Տարօրինակը դատավորի կեցվածք ընդունած «գրախոսների» պնդումն է, որի համաձայն՝ իբր 2800-ը իրականությանը չհամապատասխանող թիվ է, չնայած որ նշված է աղբյուրը: Միաժամանակ՝ հանրահայտ է, որ ձերբակալվածների մեջ քիչ չեն եղել կուսակցական, համայնքային գործիչները, որոնք պարտադիր չէ, որ լինեին մտավորականներ: Հենց այդ միտքն էլ արտահատված է հատո-

րում՝ «2800 **հայ**», այլ ոչ թե միայն մտավորական: Ինչ վերաբերում է մեր կողմից այդ թվաքանակը «*արհեստականորեն ուճացնելու*» *հայ «ցեղասպանագետների»* անհանգստությանը, հիշեցնենք, որ նոր աղբյուրների քննությունը բերում է հստակ համոզման, որ այդ թիվը շատ ավելի ցածր է, քան իրականում այն եղել է: Նույնիսկ «Թուրքական պատմագիտական ընկերության» նախկին նախագահ, այժմ՝ Թուրքիայի խորհրդարանի անդամ, երդվյալ հայատյաց գործիչ Յուսուֆ Հալաչօղլուն, ցույց տալու համար, որ մեծ թվով հայ գործիչներ իբր իշխանությունների դեմ ապստամբություն էին նախապատրաստում, տարիներ առաջ միտք էր հայտնել, որ ապրիլի վերջին ձերբակալված հայ «դավաճան ղեկավարների» թիվը հասել է 2345-ի (տե՛ս Yusuf Halacoglu, Die Armenienfrage, Klagenfurt-Wien-Ljubljana-Sarajevo, 2006, էջ 60): Ինչպես տեսնում ենք, Կ.Պոլսում 1915 թ. ապրիլի 24-25-ին ձերբակալված ու արքայազնացված և Բաքվում 1918 թ. սեպտեմբերին կոտորված հայերի թվաքանակի հարցում առանձին թուրք ու աղբյուրներից հեղինակներ ավելի «առողջ» դիրքերում են կանգնած, քան Դեմոյան-Խամբազի հովանու ներքո աշխատող հայ «գիտնականները»:

Փորձառու «գրախոսների» սուր աչքից չի վրիպել նաև մտավորականների հետ կապված ևս մեկ «բացթողում»: Հատորի հեղինակները, «*թերևս ակնհայտ աղբյուրների հետ սխալ աշխատելով*», չեն նկատել՝ գրելով, որ նրանց «*Առաջին ձերբակալությունները տեղի են ունեցել Ջեյթունում, որի մասին հաղորդվել է դեռևս 1914 թ. Հոկտեմբերի 16-ին (էջ 482): Սակայն 484-րդ էջում, հիշատակելով «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողովածուն, նշվում է հետևյալը. «Հայ հասարակական, քաղաքական և կրոնական գործիչների ձերբակալությունները*

տևում են հիմնականում չորս շաբաթ՝ 1915 թ. ապրիլի 21-ից մինչև մայիսի 19-ը»:

Ազնիվ լինելու դեպքում մեր ընդդիմախոսները, վերոհիշյալ քաղվածքն ամբողջապես մեջբերելով, տպավորություն ստեղծելու փոխարեն կնկատեին տեքստում առկա **«հիմնականում»** բառը: Մեր շարադրանքում հստակ գրված է, որ Հալեպի գերմանական հյուպատոս Վ. Ռյուպերի 1914 թ. հոկտեմբերի 16-ի գեկուցագրի համաձայն՝ **«Ջեյթունում ձերբակալվել և դաժանորեն խոշտանգվելով սպանվել է Նազարեթ Չաուշը: Կալանվում են գյուղաքաղաքի ևս 60 և շրջակա 30 հայ աչքի ընկնող ներկայացուցիչներ»:** Իսկ մտավորականության և կրոնական գործիչների հիմնական ձերբակալությունները, այո՛, տեղի են ունեցել ապրիլի 21-ից մայիսի 19-ը ընկած ժամանակահատվածում:

Հատորի հեղինակներն անհարկի մեղադրվում են Հայոց ցեղասպանության արձագանքների և այդ հանցագործության իրավաքաղաքական գնահատականի բաժնից հայ գաղթականներին՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական մարդասիրական օգնություն ցուցաբերելու գործընթացի պատմությունը դուրս թողնելու մեջ: Ակնհայտ է, սակայն, որ հայ գաղթականությանը ցուցաբերված օգնությունը ոչ թե Հայոց ցեղասպանության արձագանքն էր, կամ դրա իրավաքաղաքական գնահատականը, այլ այդ արձագանքի ու գնահատականի հետևանքով առաջացած մարդասիրական շարժումը: Ուստի հեղինակները, միանգամայն իրավացիորեն, հայ գաղթականներին ցուցաբերվող մարդասիրական օգնության խնդիրը քննարկել են «Հայ գաղթականությունն Առաջին աշխարհամարտի տարիներին» բաժնում (էջ 539-542):

Դիտողություն է արվում, որ հայերի՝ արդեն ընթացող բռնագաղթի և բնաջնջման քաղաքականությանը «օրինական» տեսք տվող «Տեղահանության մասին» օրենքը մոռացության է տրվել:

Նախ՝ «գրախոսները» նշում են փաստաթղթի ընդունման սխալ ամսաթիվ՝ մայիսի 27-ը (էջ 9), մինչդեռ այդ օրը Թալեաթն ընդամենը կառավարությանը ներկայացրել է օրենքի նախագիծը, որն ընդունվել է մայիսի 30-ին և հրապարակվելուց հետո ուժի մեջ է մտել հունիսի 1-ին: Այս հարցերը հանգամանորեն քննվել են ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանի մենագրության մեջ (տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009, էջ 178-181) և չի նշանակում, թե այդ խնդրին անպայման պետք է լիներ անդրադարձ:

Ի դեպ, «ցեղասպանագետներին» դուր չի եկել նաև երրորդ հատորի առաջին գրքում ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանի հեղինակած տեքստը: Ավելին՝ նրանք իրենց նյութի 14-րդ էջում համոզված են, որ *«Մեթոդաբանության և տեքստերը անխոցելի ու կոռ գիտականության սկզբունքով կազմելու հրամայականի տեսանկյունից քննությունն չեն բռնում համիրյան կոտորածներին անդրադարձող հետևյալ պնդումները. «...հայկական կոտորածների ծրագիրը սկսվել է նախապատրաստվել 1890 թ. ամռանից»*, *սպա հաջորդ նախադասության մեջ արվում է գիտականության առումով անընդունելի մի պնդում. «Այդ ծրագրի ամբողջական տեքստը դեռևս չի հաջողվել հայտնաբերել»*: *Հարց է առաջանում՝ որքանով է տեղին օգտագործել մի ծրագրի գոյության մասին ենթադրություն, սպա նաև խոսել ամբողջական տեքստի մասին, որի հատվածների վերաբերյալ նույնպես որևէ գրավոր փաստաթղթով չի ամրապնդվում (տե՛ս էջ 509): Սա նույնպես խիստ խոցելի ու վտանգավոր թեզ է»*:

Մատերիալ սարքողները շարադրանքում «չեն գտել» հեղինակի այն պարզաբանումը, որ հայերի բնաջնջման համիրյան ծրագրի առանձին դրվագներ հայտնի են դարձել Աբդուլ Համիդի

անձնական քարտուղար Մուսթաֆա Նեդիմի հուշագրությունից և այլ հարակից աղբյուրներից (էջ 509): Նյութ կազմողների վերոնշյալ տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում կարելի է կասկածի տակ դնել և *«խիստ խոցելի ու վտանգավոր»* համարել նաև 1911 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը ընթացած երիտթուրքական կուսակցության կենտրոնի գաղտնի ժողովի որոշումը, որի տեքստը նույնպես հայտնաբերված չէ: Նման դեպքում կասկածելի կդառնան նաև՝ հայերի ցեղասպանության կանխատեսվածությունն ապացուցող փաստաթղթերը՝ 1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար ամիսներին երիտթուրք պարագլուխների գաղտնի խորհրդակցության ընթացքում ընդունված, այսպես կոչված «10 պատվիրանների» որոշումը, որով քայլ առ քայլ մատնանշվում էին հայերի դեմ ձեռնարկվելիք միջոցները, կամ հայերին բնաջնջելու մասին Թալեաթի գաղտնի հեռագրերը, որոնցից մի քանիսը որպես ապացույց, նույնիսկ կցվել են երիտթուրքերի դատավարության նյութերին:

Ցեղասպանությունների պատմությամբ մասնագիտորեն զբաղվողները չեն կարող չիմանալ այն պարզ իրողությունը, որ նման հանցագործության կազմակերպիչները, որպես կանոն, խուսափում են դրա վերաբերյալ գրավոր փաստաթղթեր թողնելուց՝ մտավախություն ունենալով, որ հետագայում դրանք կարող են օգտագործվել իրենց պատասխանատվության կանչելու համար:

Մեղադրանքներ ներկայացնելիս հաճախ «գրախոսները» ընկնում են հակասության մեջ. մի կողմից հեղինակները մեղադրվում են աշխատանքը *«բացարձակապես հնացած աղբյուրագիտական հենքով»* կատարելու (էջ 47), մյուս կողմից՝ ամբաստանվում սկզբնաղբյուրների փոխարեն միջնորդավորված աղբյուրներ օգտագործելու մեջ (էջ 16): Չմոռանանք, որ յուրաքանչյուր մասնագետ ինքն է ընտրում իր հետազոտության աղբյուրագի-

տական և պատմագիտական հենքը: Հայոց ցեղասպանության համաշխարհային արձագանքների բաժնում հավասարակշռված ձևով օգտագործվել են ինչպես սկզբնաղբյուրներ՝ Гиббонс Г. А. Самая черная страница новейшей истории. Последние избиения в Армении, П. 1916; Deutschland und Armenien 1914-1918, Potsdam, 1919; Армения и армянский вопрос преди и след войната. С предговор от Проф. Доктор Гаврил И. Кадаров. Издание на Българо-Арменското дружество, София, 1927; Либкнехт К., Избранные речи, письма и статьи, М., 1961 (էջ 513, 518, 519), այնպես էլ տվյալ հարցերի շուրջ պատմագիտական լուրջ աշխատանք կատարած հեղինակների՝ Ա. Մնացականյանի (ի դեպ, վերջինիս՝ 1965 թ. հրատարակված «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ» մենագրությունը ներկայացվել է որպես հոդված), Մ. Ներսիսյանի, Ա. Զաքարյանի, Մ. Մուրադյանի, Ա. Յափունճյանի և այլոց արժեքավոր հետազոտությունները: Կարևոր է ոչ միայն աղբյուրների օգտագործումը, այլ նաև՝ պատմագիտական աշխատանքների ու դրանց հեղինակների աշխատանքի արժևորումը:

Դիտողություն է արվում, որ Հայոց ցեղասպանության համաշխարհային արձագանքների բաժնում հեղինակները գոնե տողատակում չեն հիշատակել Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրներին (էջ 17): Նման «դիտողություն-ցանկությունից» պարզ է դառնում, որ դրա հեղինակները «Հայոց ցեղասպանության արձագանք» հասկացությունը նույնացնում են տարբեր պետությունների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի հետ: Մինչդեռ վերջինս, հիմնվելով առաջինի վրա, հաջորդել է դրան միայն տասնամյակներ անց: Նման պահանջ ներկայացնելուց առաջ խորհուրդ կտայինք «վերհիշել» բազմահատորյակի երրորդ հատորի երկրորդ գրքի ժամանա-

կագրական սահմանները՝ (1901-1918): Տվյալ բաժնում, բնականաբար, ներկայացվել են հայերի ցեղասպանության ընթացքում և դրանից անմիջապես հետո եղած միջազգային արձագանքները: Ինչպես հայտնի է, տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը սկսվել է 1965 թ. Ուրուգվայի խորհրդարանի կողմից ընդունված բանաձևով, ուստի այդ գործընթացը, ըստ բազմահատորյակի գրքերի ժամանակագրության, ներկայացված է չորրորդ հատորի երկրորդ գրքում (1945-1991 թթ.):

«Գրախոսությունը» ամբողջապես մեղադրական եզրակացության վերածելու նպատակով՝ ամեն կերպ հատորի հեղինակներին վերագրվում են Հայոց ցեղասպանության ժխտողականության թուրքական վարկածների դրույթներ: Այսպես՝ նշվում է, թե իբր կամավորական շարժմանը վերաբերող տեքստը *«բազմաթիվ հակասություններ և երկակի մեկնաբանությունների տեղիք տվող»* ստեղծ է պարունակում (էջ 35): Մինչդեռ մեջբերվում է հատորյակի էջ 115-ից հատված, որից հստակ հասկացվում է, որ կամավորական շարժմանը չէր կարող պատճառ դառնալ հայերի ցեղասպանության համար, քանզի պանթուրքիզմի գաղափարախոսության վրա հիմնված այդ հայատյաց քաղաքականությունը ծրագրված էր վաղուց, այլ բան է, որ երիտթուրքական կառավարությունը փորձեց դա որպես պատրվակ օգտագործել իր հանցավոր քաղաքականությունն արդարացնելու համար: Ակամայից հարց է ծագում. արդյո՞ք պատեհ ու անպատեհ առիթներով հեղինակներին թուրքական տեսակետներ վերագրողներն իրենք չեն, որ առաջնորդվում են դրանցով:

Խնդրո առարկա բաժնի հեղինակը քննադատվում է Regnum գործակալության կողմից հրապարակված նյութին հղում կատարելու համար (էջ 462, հղում 1226): Խոսքը ռուսաստանցի պատմա-

բան Դավիթ Մարտիրոսյանի հողվածում տեղ գտած նորահայտ վավերագրերի մասին է, որոնք վերցված են Ռուսաստանի կենտրոնական պետական ռազմապատմական արխիվից և ներկայացնում են օսմանյան բանակի կողմից 1914 թ. նոյեմբերին Բաթումի մարզի հայ բնակչության կոտորածը: Հողվածի վերջում պատմաբանը վկայակոչել է իր կողմից օգտագործված գիտական գրականությունն ու արխիվային վավերագրերը: Անհասկանալի է, թե ինչն է այս հողվածում *«գիտականության ստումով խիստ խոցելի»*, և ինչու է վկայակոչված հողվածը գնահատվել որպես *«երկրորդական նշանակություն ունեցող»* աղբյուր (էջ 8):

Ոչ մի կերպ չենք կարող համաձայնել ընդդիմախոսների այն պնդման հետ, որ 483-րդ էջում մեր հեղինակած հետևյալ՝ **«Նշանավոր երգահան Կոմիտասը, բռնագաղթի ժամանակ ականատես լինելով հայության դժոխային տառապանքներին, կորցնում է բանականությունը»** միտքը, սխալ է, քանի որ իբր *«Կոմիտասը երբևէ ականատես չի եղել որևէ բռնագաղթի, իսկ նրա հոգեկան հիվանդության զարգացման վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ են լույս տեսել, որոնք հաջողությամբ զանց են առնվել հատորի այս կարևոր հատվածը պատրաստելիս»* (էջ 33): Նման պնդումը, որ սենսացիոն բնույթի է և չունի լուրջ հիմքեր, համոզված ենք, որ շատ կուրախացնելու միայն մեր թշնամիներին: Այստեղ տեղին է հիշել՝ *«Տեր Աստուած, ներիր զդա, զի ոչ գիտե՛ գինչ ասե՛»* ավետարանական խոսքերը:

«Գրախոսության» կազմողներն ակնհայտ սխալ են համարում 486-րդ էջում մեր՝ **«Զանգվածային կոտորածի՝ ցեղասպանության ենթարկվեցին նաև Պոնտոսի հույները»** ձևակերպումը, քանի որ դրանում *«զանգվածային կոտորած»* և *«ցեղասպանություն»* հասկացությունները նույնացվել են» (էջ 10): Զարմանալի է՝ գոնե «գրախոսության» կոորդինատոր-խմբագիրը պետք է իմա-

նար, որ ցեղասպանությունն առանց էթնիկ դրոշմատուհանով իրականացված զանգվածային կոտորածի, չի կարող լինել և երկու եզրույթի մրաժամանակյա կիրառումը չի ենթադրում դրանց նույնացում:

Ցեղասպանության թեմայով հատորի հեղինակներին հասցեագրած մեղադրանքների շարանը «ցեղասպանագետ» խմբագիրն ամփոփում է ամոթալի մի եզրահանգումով: Նա կարծում է, որ 493-րդ էջում մեր հեղինակած՝ **«Հայ բնակչության ցեղասպանությունը ժողովուրդների դեմ կազմակերպված ամենամեծ հանցագործությունն է, որին զոհ գնաց 1,5 միլիոն մարդ, ու որը խստագույնս դատապարտվում է առաջավոր մարդկության կողմից»** միտքը, անգամ եթե *«լոզունգային և հրապարակախոսական ոճին հարիր ձևակերպում է, պետք է ընդունենք, որ, իհարկե, մեզ՝ հայերիս համար այն ամենամեծ հանցագործությունն էր, սակայն մարդկությունը տեսել է մարդկային կորուստների, ժամանակի և տարածության առումներով ավելի մեծ ոճիրներ: Սա փաստ է»* (էջ 14):

Զենք զարմանում, որ Դեմոյանի համար ուրիշ ժողովուրդների ողբերգությունները *«մարդկային կորուստների, ժամանակի և տարածության առումներով ավելի մեծ ոճիրներ»* են: Դա պետք է համարել բնական, մանավանդ որ նա իրեն ապահովագրել է *«հայերիս համար այն ամենամեծ հանցագործությունն էր»* միջանկյալ նախադասությամբ: Բայց հարց է ծագում՝ ինչու է նա անդրադարձել մեր վերոհիշյալ ձևակերպմանը, երբ այն, ինչպես երևում է շարադրանքից, վերաբերում է Առաջին աշխարհամարտին, որի ընթացքում, ընդհանուր թվաքանակի համեմատությամբ ունեցած կորուստների առումով, ոչ մի ժողովուրդ այնքան չի տուժել, որքան հայությունը: Հազիվ թե այս հարցում նա ունի այլ կարծիք: Հավանաբար գաղտնիքն այնտեղ է, որ նա չի համա-

րում, որ, ի տարբերություն ցեղասպանված այլ ժողովուրդների, մենք նաև զրկվել ենք ՀԱՅՐԵՆԻ-ՔԻՑ, այսինքն՝ հայրենագրկվել ենք, դաժան մի երևույթ, որը ենթադրում է ցեղասպանություն՝ ցեղասպանությունից հետո:

Եթե Դեմոյանն ազնվություն ունենար, կխոստովաներ, որ պատմագիտության մեջ ակադեմիական մակարդակով առաջին անգամ, առանձին ենթավերնագրով անդրադարձ է կատարվել **հայրենագրկում** երևույթին (էջ 491-493), որը բազմահատորյակում առաջ քաշված տեսաքաղաքական կարևոր նորույթներից է:

Այսքանով բովանդակային բնույթի հարցերի քննությունը համարելով բավարար, նույնատիպ մնացած մանր խնդիրների կապակցությամբ նշենք, որ դրանք մեծ մասամբ չհիմնավորված ու կամայական պահանջներ են՝ այս կամ այն հարցի բացակայության, թերի լինելու, միտքը սխալ ձևակերպելու, դիզայնի տեսանկյունից խոցելի լինելու և այլնի վերաբերյալ:

թ) Լեզվատճական, ուղղագրական, տեխնիկական և այլ բնույթի բացթողումներ:

Ինչ վերաբերում է տեխնիկական, լեզվատճական, ուղղագրական և այլ բնույթի դիտողություններին, ապա դրանք կարելի է բաժանել երեք խմբի՝ 1) ընդունելի, 2) երկու ձևերն էլ ընդունելի և 3) անընդունելի: Յուրաքանչյուր խմբից առանձնացնենք օրինակներ և սկսենք ընդունելի բացթողումներից, որոնք երկու գրքերի ահռելի նյութի մեջ զբաղեցնում են ամենահամեստ տեղը.

1) Ընդունելի՝

Ի տարբերություն Դեմոյանի խմբագրությամբ շրջանառված նյութի մերժողական՝ ամեն ինչ սևացնելու, ոտճացված ներկայացնելու, դրական ոչինչ չտեսնելու գործելակերպի, մենք ընդու-

նում ենք, որ կան նաև դիտողություններ, որոնք հաշվի առնելու դեպքում, հատորը կշահեր: 1450 մեծադիր էջից բաղկացած աշխատանքի պարագայում դա անխուսափելի էր:

Ընդունելի դիտողությունները մասնավորապես կապված են կիրառված եզրույթները, տեղանունները, ամսաթվերի տոմարները միօրինակության բերելու խնդրի հետ: Նշենք, որ այդ իմաստով մենք էլ այնքան գոհ չենք բազմահատորյակի հրատարակության մրցույթը շահած հրատարակչության սրբագրիչների աշխատանքից:

Բացիոնալ է թվում Հայոց ցեղասպանության մասին նյութը ժամանակագրական սկզբունքի փոխարեն ըստ այդ հանցագործության գործադրման փուլերի (օսմանյան բանակում հայ տղամարդականց, ապա՝ մտավորականության ոչնչացում, անպաշտպան հայ բնակչության բռնագաղթ, հայերի գույքի բռնագրավում, մշակութային եղեռն, ցեղասպանության հետևանքներ) ներկայացնելու առաջարկը, ինչն ավելի կոյուրացներ նյութի ընկալումը: Այս առաջարկի հետ մեկտեղ նաև փաստենք, որ թվարկված բոլոր փուլերը տեղ են գտել «Հայոց ցեղասպանության ծրագրի գործադրման սկիզբը», «Զանգվածային բռնագաղթն ու կոտորածները 1915 թ.» և «Հայերի կոտորածները 1916 թ.» բաժիններում (էջ 8-9):

Ընդունում ենք, որ 1916-1917 թթ. ռազմական գործողությունները ներկայացնող շարադրանքում կան վրիպումներ և խրթին ձևակերպումներ: Համաձայն ենք, որ ավելի վաղ չենք հիշատակել Լ. Դևիսի՝ Խարբերդի ամերիկյան հյուպատոս լինելու հանգամանքը, ճիշտ է, որ Շանահ գյուղի ինքնապաշտպանության դրվագը կրկնվել է: Ընդունում ենք, որ ինչպես “Turkish Review” ամսագրի անվանումը, այնպես էլ որոշ գրքերի վերնագրեր ամբողջական չեն, գրականության ցանկերում կան օտարալեզու աշ-

խատությունների այբբենական կարգի մի քանի խախտումներ, հնարավոր է, բուժն ու ստորակետը երբեմն հայտնվել են մեկը մյուսի տեղում, պրոֆ. Բ. Հարությունյանի հեղինակած մի քարտեզում մնացել է ազգային ատլասի էջադիրը, «չենք իմացել», որ 2002 թ. «Սպայի տունը» քանդել են, որ «Թբիլիսի» հյուրանոցը մտել է «մարիոտների» ցանցի մեջ, մեկ թե երկու անգամ չափերտները գործածել ենք ոչ ստանդարտ տարբերակով, «Իթթիլաֆ» բառում հայտնվել է ավելորդ «թ» տառը, մոռացել ենք, որ տողատակում «նույն տեղում»-ից բացի ունենք նաև «ն.տ.» ձևը, մի դեպքում ճիշտ գրել ենք, որ Ալմա Յոհանսոնն ազգությամբ շվեդուհի է, մեկ այլ տեղ՝ նրան «դարձրել ենք» դանիացի և այլն: Անհերքելի է, որ սրբագրիչները չեն նկատել երկրորդ գրքի 184-րդ էջում տեղ գտած օտարալեզու մի քանի բառերը, և տառատեսակը փոխելիս, անփութորեն դրանք վերածել են «հիերիոգլիֆների»:

Բավարարվենք այսքանով և այդօրինակ այլ վրիպումներին անդրադառնալու փոխարեն, «արդարանանք» հետևյալ պատմությամբ: Երբ ստացանք սույն «ահասարստ» նյութը, որոշեցինք այն բաշխել ըստ տեքստերի հեղինակների՝ ակնկալելով պարզաբանումներ նշված համապատասխան դիտողությունների կապակցությամբ: Պարզվեց, որ «վրիպումներից» չի խուսափել անգամ հայ թատրոնի պատմության խորագիտակ, հայերենի փայլուն մասնագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանը: Նա իր գրավոր բացատրության մեջ՝ «Սպայի տան» ապամոնտաժման փաստը չիմանալու և «թվական» ու «թթ.» ձևերը միաժամանակ գործածելու համար ստիպված եղավ ընդունել «մեղքերը» հետևյալ ձևակերպմամբ. «Օ՛, սարսափ, ի՛նչ անփութություն: Նա պարտավոր էր իմանալ քանդման տարեթիվը: Ամո՛թ, հազա՛ր ամոթ, որ չի իմացել: Նա չի իմացել, որ անունները պետք էր գրել ոչ թե սկզբնատառերով, այլ լրիվ: Այս էլ մի

ամոթ: Նրա տեքստում կրկնվել է թ.-ն ու թվականները: Վա՛յ, վա՛յ, ո՞նց ես ապրելու, պարոն Հովհաննիսյան»:

Մենք, իրոք, ցավում ենք նկատված բացթողումների ու վրիպակների համար: Բայց համոզված ենք, որ դրանք, սակայն, որևէ կերպ չեն կարող ստվերել կամ նսեմացնել հեղինակների կատարած վիթխարի աշխատանքը, առավել ևս, որ դեռ չիրացված տպաքանակը, որը բավական մեծ է, կարող է լրացվել վրիպակների թերթիկներով: Ուրախ կլինեիք, եթե նույն ջանադրությամբ մեր գործընկերներ-սրբագրիչները մեզ օգնեին մնացած երեք գրքերի պատրաստման ժամանակ:

Ավարտենք սույն բաժնի նյութի քննությունը ֆրանսիացի նշանավոր պետական գործիչ, կարդինալ Ռիշելյեի խոսքերով՝ «Տվեք ինձ 6 տող՝ գրված ամենաազնիվ մարդու ձեռքով, և ես այնտեղ կգտնեմ այն, որի համար կարելի է նրան կախել»:

2) Երկու ձևերն էլ ընդունելի են՝

- **Կ. Պոլիս**, թե անպայման՝ *Կոստանդնուպոլիս* կամ *Պոլիս*

- **Բանակցությունները պետք է սկսել որքան հնարավոր է շուտ** – *պետք է սկսել, որքան*

- **Քյութանիա** - *Բութանիա*

- **Հաճրն** - Հաճն

- **Ելիսավետպոլ** - *Ելիզավետպոլ*

- **Քյութահիա** - *Ք(յ)ոթահիա*

- **Ռուսական կայսրություն** և *Ռուսաստանյան կայսրություն*

- **Թոխատ** - Թոքատ

- **Երիտթուրքերի հեղաշրջում** – *երիտթուրքերի կատարած հեղաշրջում*

- **զինակոչային** – *զորակոչային*

- **տեսակետից** – *տեսանկյունից*

- *Սանկտ Պետերբուրգ տեղանունը գործածված է միայն Ս. Պետերբուրգ ձևով (ա՛յ քեզ պահանջ):*

- 1917 թ. իրադարձությունների կապակցությամբ ժամանակակից ռուսաստանյան պատմագրության մեջ կիրառվում են և՛ «հեղափոխություն» և՛ «հեղաշրջում» ձևերը:

- ընդդիմախոսների՝ «*Մոսկովյանական մոլեռանդություն» եզրի փոխարեն (էջ 508) ակադեմիական հրատարակության համար ավելի պատշաճ կլիներ օգտագործել «կրոնական մոլեռանդություն» եզրը»* պնդումը, վիճելի է:

- 7-րդ ենթաբաժնի («*Թվական», «դար» բառերի կրճատման ոչ հաջող դեպքեր»* վերնագրով) դիտարկումների դեպքում նույնպես խոսքը ավելի կամ պակաս նախընտրելի տարբերակների մասին է ընդամենը: Վերնագրում կա դրա խոստովանությունը («*ոչ հաջող դեպքեր»*):

- 9-րդ ենթաբաժնի («*Խմբագրական վրիպումներ»*) 11 դիտարկումներից միայն վերջին երկուսն են ուշադրության արժանի: Մյուսների դեպքում նույնպես խոսքը ավելի կամ պակաս նախընտրելի տարբերակների մասին է ընդամենը:

- Թեև առաջարկվող՝ «Ավստրո-Հունգարիայի դեսպանատուն», «Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար» ձևերն ավելի ճիշտ են, սակայն հատորում գործածված «ավստրո-հունգարական դեսպանատուն», «օսմանյան ներքին գործերի նախարար» տարբերակները միանգամայն հասկանալի են, ինչու չէ, նաև կիրառելի:

3) Անցնենք **անընդունելի** դիտողությունների պարզաբանմանը.

Նախ՝ արձանագրենք հետևյալ փաստը: «Գրախոսության» մեջ լեզվական «*սխալներին»* վերաբերող բաժինը կազմված է գարմանալի, միաժամանակ փնթի ու անճաշակ կերպով: Դասա-

կարգման անկարողություն, տրամաբանության բացակայություն, ասելիքը ընթերցողին հասցնելու անզորություն... Հաճախ ճիշտն ու «սխալն» այնպես են ներկայացված, որ ընթերցողը մինչև բնագրին չհետևի, չի իմանա, թե քննադատն ինչն է սխալ համարել, մանավանդ որ հաճախ ճիշտ ձևի փոխարեն առաջարկվում է սխալ ձև ...: Անցնենք փաստերին ու օրինակներին.

«Գրախոսության» այս բաժինը վերնագրված է *«Լեզվաոճական և ուղղագրական սխալներ»*: Դեռ մի կողմ թողնենք այն, որ ուղղագրականը լեզվաոճականի մի տարատեսակն է, հետևաբար չի կարելի տեսակն ու տարատեսակը միավորել «և» շաղկապով: Դա լեզվատրամաբանական սխալ է: Բայց դա չարյաց փոքրագույնն է: Անգրագիտության տոնավաճառն առջևում է:

«Գրախոսության» այս բաժնի առաջին ենթաբաժինը վերնագրված է *«Տեխնիկական վրիպակներ»*, և թվարկված են միայն բազմաթիվ էջեր առանց որոշակի վրիպակներ կամ գոնե դրանց տեսակներ նշելու: Ընթերցողին մնում է ենթադրել, որ խոսքը ձևավորման վրիպումների մասին է (ավելորդ բացատ, անհրաժեշտ բացատի բացակայություն, միջտողային հեռավորության խախտում և այլն), քանի որ սրբագրական վրիպումները ներկայացված են հաջորդիվ: Վերջապես հարց է ծագում. այդ ո՞ր տրամաբանությամբ են տեխնիկական վրիպումները համարվում լեզվական թերացումներ... Սրանից հետո կարծես թե իսկապես սկսվում է լեզվական ենթադրյալ թերացումների վերլուծությունը: Համենայն դեպս «գրախոսության» հեղինակները գրել են՝ *«Այժմ անդրադառնանք ուղղագրական սխալներին»*, և վերնագրված ու համարակալված ենթաբաժիններով ներկայացրել են ինչ պատահի՝ է՛լ քերականական, է՛լ ոճական, է՛լ կետադրական, է՛լ տառադարձման ենթադրյալ թերացումներ՝ ամենաանտրամաբանական ենթավերնագրերով: Պատկերացնո՞ւմ եք, *«Ուղղագրական սխալ-*

ներ» բաժնի 6-րդ ենթաբաժինը դարձյալ կոչվում է «Ուղղագրական սխալներ»...

Այստեղ արժեք, որ մեր վերլուծությունն ընդհատեինք, քանի որ այսքան անորակ քննադատությունն արժանի է ընդամենը արհամարհանքի: Ցավոք, ամեն մարդ չէ, որ ըմբռնումով կմոտենա այդ արհամարհանքին: Ուստի շարունակենք:

«Գրախոսության» հեղինակների տրամաբանությամբ՝ «*Լեզվական և ուղղագրական սխալներ*»-ից հանած «*Տեխնիկական վրիպակներ*»՝ հավասար է «*Ուղղագրական սխալներ*»-ի: Մյուս կողմից՝ «*Ուղղագրական սխալներ*» = «*Ուղղագրական սխալներ*» + «*Կետադրական սխալներ*» + «*Անթոյլատրելի ձևակերպումներ*» + «*Կրճատման ոչ հաջող դեպքեր*» + «*Խմբագրական վրիպումներ*» + «*Ուր – որտեղ-ի սխալ գործածություն*» և այլն: Մեր սփյուռքահայ հայրենակիցը կասեր. «Է՛, ըրածիդ հավնեցա՞ր»...

Ընդդիմախոս «լեզվաբանները» կարո՞ղ են բացատրել, թե ինչ է նշանակում «*Խմբագրական վրիպումներ*»: Մի՞թե մյուս կարգի սխալների մեծ մասը դարձյալ խմբագրական չէ: Մյուս ենթավերնագրերն էլ մի բան չեն: Չկա ո՛չ դասակարգման, ո՛չ ձևակերպման միասնական սկզբունք: Ավելին, որոշ ենթաբաժիններում մատնանշված «*վրիպումներն*» իրենց բնությով ոչ մի կապ չունեն ենթաբաժնի վերնագրի հետ: Օրինակ՝ 4-րդ ենթաբաժնում, որն ունի «*Ուր – որտեղ-ի բազմաթիվ սխալ գործածություն*» արտառոց ու սխալավոր վերնագիրը, իբր վերլուծված են 8 տարբերույթ «*վրիպումներ*», որոնցից միայն մեկն է առնչվում վերնագրին: Մյուս յոթից վերջինը կրկնված է 6-րդ ենթաբաժնում, իսկ մնացած մատնանշումները պիտի տեղ գտնեին այլ ենթաբաժիններում:

Բայց փորձենք այս շիլաշփոթի մեջ գտնել խելամիտ (ռացիոնալ) հատիկներ: Դիտողությունների այս բաժնի 1-ին ենթաբաժնի

(«Անձնանունների, տեղանունների ուղղագրական սխալներ» անհաջող վերնագրով) 17 մատնանշումներից միայն առաջինն է վերաբերում սխալի (Հալիպոլ): Մյուսների դեպքում խոսքը տարբերակային ձևերի, վիճելի դեպքերի կամ սոսկ վրիպումների մասին է: Նկատենք նաև, որ ոչ բոլոր մատնանշումներն են վերաբերում անձնանունների կամ տեղանունների:

3-րդ ենթաբաժնում («Ճիշտ ձևակերպումների հետ մեկտեղ հանդիպում են անթույլատրելի ձևակերպումներ» տարօրինակ վերնագրով) անվերապահ ընդունելի դիտարկում չկա: Խոսքը մեծ մասամբ ավելի կամ պակաս նախընտրելի տարբերակների մասին է, մի քանի դեպքում՝ վրիպակների: Իսկ մի քանի դեպքում էլ «քննադատ-լեզվաբանները» մոռացել են իրենց նախընտրած տարբերակը նշել: Մի դեպքում էլ դարձյալ «շփոթել են» մատնանշած էջը՝ 156, որտեղ չհաջողվեց գտնել կասկածի ենթարկված «հրատարակվեցին» բառը:

4-րդ ենթաբաժնում գրեթե նույն իրավիճակն է, ինչ նախորդում: Այս ենթաբաժնի վերնագրում կա քերականական (թվային կախման) սխալ. «**Ուր-որտեղ-ի բազմաթիվ սխալ գործածությունն**»: Պետք է լինի «գործածություններ» (այդպես է պահանջում «բազմաթիվ» բառը):

Ի դեպ, այս բաժնի նախավերջին դիտարկմամբ սխալ է համարված «**հատկանիշներ**» ձևը՝ փոխանակ «հատկանիշեր»-ի (չնայած լեզվաբանները տարիներ առաջ պայմանավորվել են երկու տարբերակն էլ ճիշտ համարել): Բայց, որքան էլ զարմանալի է, հենց «գրախոսության» մեջ գործածված է «**հատկանիշներ**» տարբերակը (էջ 6 և այլն):

Ուշագրավ է նաև այս բաժնի տասներորդ դիտարկումը, որով պահանջվում է, որ միշտ մեծատառով լինի **երկրի** գլխավոր օրենքի՝ սահմանադրության գրությունը: Ո՞ր երկրի, **Թուրքիայի**՝...

Խնդիրն այն է, որ նշված բառը բացառության կարգով մեծատառով է գրվում միայն մեր հայրենիքի երկու պետականությունների՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության գլխավոր օրենքները նկատի ունենալիս:

«*Կետադրական սխալները*» վերնագիրը կրող ենթաբաժնի 7 դիտարկումներից վերջինը կետադրությանը չի վերաբերում: Մյուսներից 6-ի դեպքում քննադատներն իրենք են խոր թյուրիմացության մեջ: Մանրամասների մեջ չենք մտնում. դա շատ հեռուն կտաներ: Ճիշտ է միայն չորրորդ դիտարկումը:

- Առաջարկվող *Ադրիանասպոլիս* տարբերակը սխալ է: Ճիշտը մեր գործածած **«Ադրիանուպոլիս»** ձևն է: «Լեզվաբան» քննադատը կարծում է, թե բառամիջի **ս** ձայնավորը հոդակապ է՝ չիմանալով, որ հունական Ադրիանոս, Կոստանդինոս, Թեոդորոս, Փիլիպոս և այլ հատուկ անունները հայերենում բառաբարդվելիս ենթարկվում են **ռ** հոլովման, ինչպես Ադրիանուպոլիս (Ադրիանոսի քաղաք), Կոստանդնուպոլիս (Կոստանդնի քաղաք), Թեոդուպոլիս (Թեոդոսի քաղաք), Փիլիպուպոլիս (Փիլիպոսի քաղաք) և այլն:

- «Գրախոսության» հեղինակները չգիտեն, որ **Վախթանգ Գորգասար** ձևը վրացական՝ *Վախթանգ Գորգասալի* հայկական տարբերակն է (տե՛ս ժամանակի հայկական աղբյուրները):

- **Շապին Կարահիսար** և **Աֆիոն Կարահիսար** ձևերն ավելի ճիշտ են, քան առաջարկվողը:

- Զարմացնող է այն պնդումը, որ պետք է գրել ոչ թե **երգահան Կոմիտասը** (էջ 483), այլ անպայման՝ կոմպոզիտոր Կոմիտասը:

- «*Անձնանունների՝ թուրքերենի հնչողությամբ գրության կիրառում, որն ամենևին հարստատ չէ հայոց լեզվին*» (գրիս., էջ 40) գիտական ոճին անհարիր և խուճուճ վերնագրով ենթաբաժնում 11 մատնանշումներից միայն վերջինն է մեզ համար ընդունելի:

Մյուսները վերաբերում են տարբերակային ձևերի, որոնցից մեկի կամ մյուսի ընտրությունը մոտեցման ու ճաշակի խնդիր է: Նկատենք նաև, որ ոչ բոլոր մատնանշումներն են վերաբերում անճանուններին:

Չիմանալով թուրքերենում *i* (ի) և *i* (ը) ձայնավորների տարբերությունն ու արտասանությունը՝ «լեզվաբանները» առաջարկում են **Այդըն** (Aydin), **Հաքքը** (hakki), **Հայրըը** (hayirli), **Նազըն** (Nazim), **Ղասըմ** (Kasim) ձևերը գործածել սխալ՝ *Այդին*, *Հաքի*, *Հայրի*, *Նազիմ*, *Ղասիմ* գրելաձևով: Նրանք չեն տարբերում *ü* (ու) և *u* (կոկորդային ու) տառերն ու հնչյունները՝ առաջարկելով հյուրիեթ (Hürriyet) ճիշտ ձևը փոխարինել *հուրիեթ*-ով և այլն:

- «Գրախոսության» 39-րդ էջում մեզ հանդիմանում են, որ 213-րդ էջում (չի նշվում, թե խոսքը որ գրքի մասին է) **Ալեքսանդրապոլի** անունը «դարձրել ենք» *Ալեքսանդրոպոլ*: Եթե առաջին գրքի տվյալ էջում **Ալեքսանդրապոլ** տեղանուն ընդհանրապես չկա, ապա երկրորդի 213-րդ էջում այն երկու անգամ գործածվում է, բայց երկու դեպքում էլ՝ **Ալեքսանդրապոլ** ճիշտ ձևով: Համոզվում ենք, որ մեր «կույր բարեկամները» առաջնորդվել են նույն տրամաբանությամբ՝ կարևորը սուտը մատուցելն է, մարդկանց ապակողմնորոշելը, քանի որ հազիվ թե մեկը կասկածի ու համեմատի իրենց պասկվիլում սարքած նյութը ակադեմիական հրատարակության տեքստի հետ:

- Նկատելով վրիպակ՝ ընդդիմախոս-սրբագրիչներն իրենք են սխալվել: Նրանց կարծիքով՝ «*սխալ է տրված հայ ճարտարապետության պատմության գիտակ ժողեֆ Սրժիգովսկու ազգանունը. այն գրված է Սորիժովսկի (էջ 220 տե՛ս ՀՀՀ հ. 4, էջ 527)*»: Իրականում գիտնականի ազգանունը ոչ թե *Սրժիգովսկի է, այլ՝ Սորիժիգովսկի*:

Հիշենք Պատմահորը՝ «Աշակերտ հեղգ առ ի յուսումն եւ փոյթ առ ի վարդապետել» (ուսման մեջ ծույլ աշակերտը շտապում է սովորեցնել):

Արդեն երևի նկատվեց, որ հիշյալ «գրախոսության» լեզուն ինքնին չի դիմանում ոչ մի քննադատության: Դրանում կան ամեն տեսակի սխալներ, թերացումներ, թյուրիմացություններ, անճաշակություններ, վրիպակներ, տառասխալներ... Ի դեպ, «գրախոսության» 48 էջերում ավելի շատ լեզվական թերություններ կան, քան «Հայոց պատմության» երկու հատորների շուրջ 1450 էջերում: Դրանց հանգամանակից վերլուծությունից ձեռնպահ կմնանք: Միայն կմատնանշենք լեզվական կոպիտ սխալների ևս մի քանի նմուշ:

«Գրախոսության» 4-րդ էջում գործածված է *«եթովպահայ պատմություն»* արտահայտությունը: Պետք է լինի կա՛մ «եթովպահայոց պատմություն», կա՛մ «եթովպահայ համայնքի (կամ գաղթօջախի) պատմություն»:

46-րդ էջում կարդում ենք. *«Ինչ վերաբերում է գրքի ձևավորման գեղագիտական կողմին, սպաս ստիպված ենք ասել, որ նման ցածր մակարդակի հատորների ձևավորումն ու տպագրությունը առավել կիրառական էր 1950-60-ականներին»*: Կարծում ենք, որ այս տողերի հեղինակները *«նման ցածր մակարդակի»* բնորոշումը նախատեսել են ոչ թե «հատորների», այլ «ձևավորման ու տպագրության» համար: Հետևաբար շարադասության սխալը ուղղելուց հետո կունենանք «... հատորների՝ նման ցածր մակարդակի ձևավորումն ու տպագրությունը...» շարադրանքը: Կարծում ենք նաև, որ գրախոսները տարբեր երևույթներ են համարում «ձևավորումն» ու «տպագրությունը», իսկ դա նշանակում է, որ առկա է բազմակի ենթակա, որը պահանջում է հոգնակի ստորոցյալ՝ «կիրառական էին», այլ ոչ թե «էր»: Ոճական առումով բնավ տեղին

չէ՛ նաև «կիրասական» բառի գործածությունը: Փոխարենը պետք է լիներ «բնորոշ» բառը: Ինչ վերաբերում է հատորների ճնավորման մակարդակին, ապա այն թողնում ենք ընթերցողի ճաշակին. երևանյան գրախանութներում ցանկացած պահի «Հայոց պատմության» հատորներին կարելի է ծանոթանալ:

Անշակ ու խառնափնթոր «նախադասություններից» է բաղկացած «գրախոսության» հատկապես «*Անիուփիչ եզրահանգումներ*» բաժինը: Տպավորությունն այնպիսին է, որ այդ բաժնի հեղինակն աշխատել է միայնակ, զայրացած ու իրեն կորցրած, հանգիստ գլխով չի վերընթերցել իր գրածը, որևէ մեկին չի տվել խմբագրման ու շտապել է արագ տարածել աշխարհով մեկ:

Այսքանից հետո մեր «պատմաբան-լեզվաբանները» իրենց բարոյական իրավունք են վերապահել հայտարարելու. «*Հատորներում կան բազմաթիվ ուղղագրական, կետադրական սխալներ և տեխնիկական վրիպակներ: Հաշվի առնելով միայն այս փաստերը և մի կողմ թողնելով հատորների գիտականության հարցը՝ ակնհայտ է, որ կատարված աշխատանքը խոտանված է*» (էջ 47): Նախ՝ պետք էր ասել «խոտան է», այլ ոչ թե «խոտանված է», քանի որ դա ոչ թե ընդունված փաստ է, այլ ընդամենը նյութ սարքողների թյուր կարծիքը կամ, ավելի ճիշտ, ցանկությունը: Երկրորդ՝ փաստորեն «գրախոսները» հատորների գիտականության խնդրում ևս նահանջել են ու ձեռքը գցել փրփուրներին՝ «*ուղղագրական, կետադրական սխալներին և տեխնիկական վրիպակներին*»: Բայց, ինչպես տեսանք, այդտեղ էլ իրենց թուրը չի կտրել... Մեզ մնում է անել հետևյալ եզրակացությունը: **Խոտան գրախոսությամբ գիրք չի խոտանվի:**

ԱՄՓՈՓՈՒՄ

«Գրախոսության» քննությունից հստակ երևում է, որ գործ ունենք հերթական ամբաստանագրի հետ, որի նպատակը ոչ թե իստորիզմի՝ պատմականության դիրքերից գրված «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակ ունենալու մտահոգությունն է, այլ հույժ կարևոր, համազգային նշանակության աշխատության ստեղծման նպատակի շուրջ համախմբված հայագետներին վարկաբեկելը:

Ներկայացված մեղադրանքները փաստորեն ունեն քաղաքական բնույթ, ուստիև գերազանցապես վերաբերում են հանգուցային խնդիրների՝ Հայոց ցեղասպանություն, ժողովրդագրություն, ազգային-ազատագրական շարժումներ, կուսակցությունների գործունեություն, պետականության հիմնահարցեր և այլն: Բայց Դեմոյանի գլխավորած «գրախոսների» խումբը ոչ միայն լուրջ դիտողություններ չի գտել, այլև փաստորեն առաջ է քաշել վտանգավոր, հակահայկական ու ապազգային տեսակետներ: Ստիպված ենք դրանցից մի քանիսը կրկին վկայակոչել:

Հատկապես անընդունելի ու դատապարտելի է Դեմոյանի հանդգնումն այն հարցում, որ որքան էլ հայերիս ընկալմամբ՝ Հայոց ցեղասպանությունը **«ժողովուրդների դեմ կազմակերպված ամենամեծ հանցագործությունն է»**, այնուամենայնիվ, *«մարդկությունը տեսել է մարդկային կորուստների, ժամանակի և տարածության ստումներով ավելի մեծ ոճիրներ: Սա փաստ է»* (էջ 14): Ուզում ենք իմանալ, այդ ո՞ր ոճիրներն են նկատի առնվել:

Թե՛ գիտական և թե՛ քաղաքական առումով անընդունելի է նաև Դեմոյանի կողմից վիճարկվող փաստը՝ 1918 թ. սեպտեմբերին Բաքվում օսմանյան զորքերի ու կովկասյան թաթարների կողմից կոտորված 30000 հայերի թվաքանակի վերաբերյալ: Հատկանշական է, որ այդ իրողությունը հաստատել են ոչ միայն հայտնի բոլոր աղբյուրները, այլև խորհրդային տարիներին՝ անգամ ադրբեջանական պատմաբանները:

Վրդովեցուցիչ են նաև Արցախի և Սյունիքի մելիքությունները՝ որպես պետականության հստակ դրսևորում տեսնելու մեր համոզմունքը վիճարկելը, ազգային պատմության շարադրանքը *«նեղազգայնական ու ռասիստական երանգներ կրող, հսկազիտական»* որակելը, մեզ մեկ՝ մարքսիստական, մեկ՝ դաշնակցական մեթոդաբանություն կիրառելու մեջ մեղադրանքներ ներկայացնելը և այլն:









Մեր պատասխանից հետևում է, որ սեփական եսի զգացողությամբ չբավարարված Դեմոյանը, ճգնելով սևացնել հայագետների մի ամբողջ սերնդի մտքի ու գրչի արգասիք *«Հայոց պատմության»* երրորդ հատորի երկու գրքերը, «Կոթողային խայտառակություն» գտնելու փոխարեն, իրականում ստեղծել է **խայտառակության կոթող**:

Մենք համոզված ենք, որ այսքանից հետո էլ Դեմոյանը չի փոխվելու և շարունակելու է հարստացնել իր կենսագրության սկանդալային էջերը: Անուամենայնիվ, կցանկանայինք նրան հորդորել, որ պետության կողմից թանգարան-ինստիտուտին հատկացված միջոցները սեփական ամբիցիաների բավարարմանը ծառայեցնելու, վաստակաշատ գիտնականներին վարկաբեկելու և նրանց կողմից ստեղծված արժեքավոր ու մնայուն աշխատանքը սևացնելու փորձերի փոխարեն գոնե հիմա զբաղվի ազգօգուտ

գործով: Օրինակ՝ «խմբագիր» Դեմոյանն ու «գրախոսականի»՝ անանուն մնացած նրա գործընկերները կարող էին (իրականում՝ պարտավոր էին) ձեռնամուխ լինել «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության» բազմահատորյակ ստեղծելու գործին: Բայց քանի որ Դեմոյանի երկարամյա տնօրինության ընթացքում դատելի չի ունեցել, սկսում ես մտածել, որ նման կադրային կազմով հազիվ թե առաջիկայում ևս դատելի ունենա:

Համենայն դեպս, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը՝ ակադեմիական հոմանիտար ինստիտուտների, պետական համալսարանի և գիտակրթական այլ կենտրոնների օժանդակությամբ հայոց պատմության ակադեմիական հրատարկությունն ստեղծելու հայրենանվեր գործը ձեռնարկել է և այն հասցնելու է իր ավարտին: Մեզ համար կարևոր են ոչ թե զրպարտագրերի հեղինակների, այլ մեր ժողովրդի, նրա մեծանուն զավակների տված գնահատականները: Այստեղ ավելորդ չենք համարում վկայակոչել «Իրատես» թերթում (2017 թ. հունվար 20-23, էջ 12) բնաստեղծ Հարություն Հովնաթանի հետ հարցազրույցում մեր արդի հայագիտության նահապետներից ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի հայտնած կարծիքը: Խոսելով ազգային արժեքների մասին՝ նա **«տասնապատիկ ավելի ազգային արժեք»** է համարում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակիցների ու հանրապետության լավագույն հայագետների անդով ջանքերով ստեղծված «Հայոց պատմություն» բազմահատորյակը, որտեղ կարելի է գտնել **«հայոց պետականության գիտությունը, նրա անցյալը, ներկան և ապագան»**:

«Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի երրորդ հատորի խմբագրակազմ և հեղինակներ՝

- Վ. Բարխուդարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս 
- Ա. Մելքոնյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս 
- Ա. Խառատյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ 
- Մ. Հասարթյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ 
- Հ. Հովհաննիսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ 
- Ա. Հակոբյան, պ.գ.դ. 
- Գ. Խուրդինյան, պ.գ.դ. 
- Ռ. Սահակյան, պ.գ.դ. 
- Գ. Ստեփանյան, պ.գ.դ. 
- Վ. Մելիքյան, պ.գ.դ. 
- Ա. Ներսիսյան, պ.գ.դ. 
- Ա. Մարության, պ.գ.թ. 
- Հ. Մուրադյան, պ.գ.թ. 
- Ա. Հարությունյան, պ.գ.թ. 
- Ա. Մադալյան, պ.գ.թ. 
- Գ. Բադալյան, դասախոս 